

«Գրանցված է»  
ՀՀ արդարադատության  
նախարարության կողմից  
16 հունիսի 2008 թ.  
Պետական գրանցման թիվ 10208193

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

30 մայիսի 2008 թ.  
ք. Երևան

N 44-Ն

## Հ Ր Ա Մ Ա Ն

**«ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾՆԵՐԻ ԵՎ ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼՆԵՐԻ ՀԵՏ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ,  
ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ  
ԿԱԼՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ» ԿԱՐԳԸ  
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Քրեակատարողական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասով, ինչպես նաև կալանավորվածների և դատապարտյալների հետ իրականացվող սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքները կազմակերպելու նպատակով.

### *Հրամայում եմ՝*

1. Հաստատել «Կալանավորվածների և դատապարտյալների հետ սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության» կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի 2004 թվականի սեպտեմբերի 9-ի «Կալանավորված անձանց և դատապարտյալների հետ սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության կարգը հաստատելու մասին» թիվ 141-Ն հրամանը:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Նախարար՝

Գ. Դանիելյան

**Կ Ա Ր Գ**

**ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾՆԵՐԻ ԵՎ ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼՆԵՐԻ ՀԵՏ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ,  
ՀՈԳԵՔԱՆԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ  
ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ**

**Բ Ա Ժ Ի Ն 1**

**ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

**Գ Լ ՈՒ Խ 1**

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Սույն կարգը սահմանում է քրեակատարողական ծառայության մարմիններում և հիմնարկներում կալանավորվածների և դատապարտյալների հետ սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության կազմակերպումը, իրականացումը և վերահսկողությունը:

2. Կալանավորված անձանց և դատապարտյալների հետ սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներն իրականացվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն կարգին և իրավական այլ ակտերին համապատասխան:

3. Քրեակատարողական ծառայության սոցիալական, հոգեբանական, և իրավական աշխատանքներ իրականացնող ստորաբաժանումների (այսուհետ՝ ստորաբաժանումներ) նպատակը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում (այսուհետ՝ քրեակատարողական հիմնարկ) պահվող կալանավորված անձանց և դատապարտյալների սոցիալական վերականգնումը և դատապարտյալների ուղղմանը նպաստելն է:

4. Ստորաբաժանումների կողմից իրականացվող սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների խնդիրներն են.

1) կալանավորվածների և դատապարտյալների՝ արտաքին աշխարհի հետ սոցիալապես օգտակար կապեր և շփումներ ստեղծելը, պահպանելը և զարգացնելը,

2) կալանավորվածների և դատապարտյալների հոգեկան առողջությունը պահպանելը և ամրապնդելը,

3) կալանավորվածների և դատապարտյալների սոցիալական, հոգեբանական և իրավական պաշտպանվածությանը նպաստելը,

4) կալանավորվածների և դատապարտյալների աշխատանքային, կրթական, մշակութային, մարզական, ստեղծագործական գործունեության զարգացմանը նպաստելը,

5) կալանավորվածների և դատապարտյալների հոգևոր պահանջմունքների բավարարմանը նպաստելը,

6) կալանավորվածների և դատապարտյալների օրինապահ վարքագծի դրսևորմանը, իրավագիտակցության բարձրացմանը նպաստելը,

7) կալանավորվածների և դատապարտյալների մոտ, հասարակության համակեցության կանոնների և ավանդույթների նկատմամբ հարգալից վերաբերմունքի ձևավորմանը նպաստելը,

8) դատապարտյալների սոցիալական վերականգնման և պատժից պայմանական վաղաժամկետ ազատման համար պայմաններ ստեղծելը,

9) դատապարտյալների հասարակություն վերաինտեգրվելուն նպաստելը:

5. Սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքները՝ սոցիալական, հոգեբանական և իրավական մասնագիտական աշխատանքների, ինչպես նաև կրթական, մշակութային, մարզական և հոգևոր-կրոնական բնույթի միջոցառումների համալիր իրականացումն է:

6. Սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներն իրականացվում են օրինականության, մարդասիրության, անձի իրավունքներն ու ազատությունները, արժանապատվությունը հարգելու, ինչպես նաև սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների անհատականացման, տարբերակման և շարունակականության սկզբունքների հիման վրա:

7. Սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքները տարբերակվում են՝ հաշվի առնելով պատժի տեսակը, կալանավորվածի կամ դատապարտյալի սեռը, տարիքը, առողջական վիճակը, վերաբերմունքը իր կողմից կատարված հանցագործության նկատմամբ, կատարած հանցագործության բնույթն ու հասարակական վտանգավորության աստիճանը, ինչպես նաև քրեակատարողական հիմնարկի տեսակը և այլ առանձնահատկություններ:

8. Կալանավորվածների և դատապարտյալների ընդգրկումը սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներին իրականացվում է կամավոր հիմունքներով, բացառությամբ անչափահասների:

Անչափահաս կալանավորվածների և դատապարտյալների ընդգրկումը սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներին պարտադիր է:

## Գ Լ ՈՒ Խ 2

***ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ, ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ***

9. Կալանավորված անձանց և դատապարտյալների հետ սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ իրականացնելու նպատակով

քրեակատարողական ծառայությունում գործում են քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի՝ քրեակատարողական վարչության (այսուհետ՝ վարչություն) կառուցվածքային ստորաբաժանում հանդիսացող սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների բաժինը (այսուհետ՝ վարչության բաժին), ինչպես նաև քրեակատարողական հիմնարկների կառուցվածքային ստորաբաժանում հանդիսացող սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների բաժինները կամ խմբերը (այսուհետ՝ քրեակատարողական հիմնարկի բաժին կամ խումբ):

10. Վարչության բաժինը սույն կարգով և համապատասխան այլ իրավական ակտերով սահմանված կարգով իրականացնում է կալանավորված անձանց և դատապարտյալների հետ իրականացվող սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների ընդհանուր կազմակերպումը և վերահսկումը՝ համագործակցելով վարչության, քրեակատարողական հիմնարկների ստորաբաժանումների, ինչպես նաև այլ մարմինների և հաստատությունների հետ:

11. Քրեակատարողական հիմնարկների բաժինները կամ խմբերը սույն կարգով և համապատասխան այլ իրավական ակտերով սահմանված կարգով կալանավորված անձանց և դատապարտյալների հետ իրականացնում են սոցիալական և հոգեբանական և իրավական աշխատանքներ՝ աշխատանքային ծրագրերի հիման վրա՝ համագործակցելով քրեակատարողական հիմնարկի այլ ստորաբաժանումների հետ:

12. Սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների ընդհանուր համակարգում իրականացնում է քրեակատարողական հիմնարկի պետը կամ պետի՝ սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքները համակարգող տեղակալը (այսուհետ՝ պետի տեղակալ):

13. Սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներն արդյունավետ և համալիր իրականացնելու նպատակով քրեակատարողական հիմնարկների բաժիններում կամ խմբերում, ինչպես նաև ազատությունից գրկելու հետ չկապված պատիժների կատարման ստորաբաժանումներում կազմվում են տարեկան աշխատանքային ծրագրեր: Աշխատանքային ծրագիրն ընդգրկում է տվյալ տարվա ընթացքում ծրագրավորվող աշխատանքների ընդհանուր շրջանակը, հիմնական ուղղությունները, աշխատանքի մեթոդները, աշխատանքի կատարման, հաշվառման և վերլուծության իրականացման բաշխումը և ժամկետները, քրեակատարողական հիմնարկի և ազատությունից գրկելու հետ չկապված պատիժների կատարման ստորաբաժանման և այլ կառուցվածքային ստորաբաժանումների ներգրավվածության համակարգումը:

14. Յուրաքանչյուր կիսամյակ քրեակատարողական հիմնարկների բաժիններում կամ խմբերում և ազատությունից գրկելու հետ չկապված պատիժների կատարման ստորաբաժանումներում կատարվում է սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների ամփոփում, որի հիման վրա հաշվետվություն է ներկայացվում վարչության բաժին, որը կատարում է ստացված հաշվետվությունների ամփոփում և վերլուծություն: Վարչության նախաձեռնությամբ կարող են կատարվել նաև

քրեակատարողական հիմնարկների բաժինների կամ խմբերի և ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների կատարման ստորաբաժանումների տարբեր ժամանակահատվածների աշխատանքների ամփոփումներ:

15. Սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքները կազմակերպվում են՝

1) Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված դեպքերում կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու ժամանակ,

2) Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված պատիժների կատարման ժամանակ, բացառությամբ տուգանքի, հատուկ կամ զինվորական կոչումից, կարգից, աստիճանից կամ որակավորման դասից զրկելու, գույքի բռնագրավման և կարգապահական գումարտակում պահելու ձևով նշանակված պատիժների,

3) Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված դեպքերում պատիժը պայմանականորեն չկիրառելիս կամ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելիս՝ դատարանի կողմից սահմանված փորձաշրջանն անցնելու ժամանակ:

### **Գ Լ ՈՒ Խ 3**

#### ***ՍՈՑԻԱԼԱԿԱՆ, ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ***

16. Վարչության բաժնի պետի՝ ծառայողական հարցերով ենթակայությունը սահմանվում է սույն կարգով և իրավական այլ ակտերով:

Վարչության բաժնի պետի բացակայության ժամանակ նրա պարտականությունները կատարում է վերջինիս կողմից առաջարկված և սահմանված կարգով նշանակված պաշտոնատար անձը:

Վարչության բաժնի պետը ղեկավարում և համակարգում է բաժնի գործունեությունը՝ կատարելով աշխատանքի բաշխում բաժնի մասնագետների միջև, ինչպես նաև քրեակատարողական հիմնարկների բաժինների կամ խմբերի գործունեությունը:

17. Վարչության բաժնի պետը՝

1) կազմակերպում է համապատասխան վերահսկողություն սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների կատարման նկատմամբ՝ համապատասխան փաստաթղթերի գրագրությունների օրինականությունը հսկելու միջոցով,

2) կազմակերպում է ուսումնասիրություններ և ստուգայցեր քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում,

3) կիսամյակային և տարեկան հաշվետվությունների հիման վրա կազմակերպում է վերլուծական աշխատանքներ քրեակատարողական հիմնարկների և մարմինների բաժինների կամ խմբերի գործունեության վերաբերյալ,

4) աջակցում է ստորաբաժանումների ծառայողների վերապատրաստման աշխատանքների կազմակերպմանը,

5) կալանավորված անձանց և դատապարտյալների սոցիալական, հոգեբանական և իրավական օգնությունը առավել արդյունավետ իրականացնելու նպատակով համագործակցում է վարչության կառուցվածքային այլ ստորաբաժանումների հետ,

6) օրենսդրությամբ սահմանված կարգով ընթացք է տալիս քաղաքացիների առաջարկություններին, դիմումներին և բողոքներին,

7) աջակցում է վարչության բաժնի, քրեակատարողական հիմնարկների և մարմինների բաժինների կամ խմբերի նոր ծառայողների ստաժավորման կազմակերպման աշխատանքներին,

8) վարչության պետի հաստատմանն է ներկայացնում վարչության բաժնի աշխատանքային ծրագրերը,

9) մասնակցում է Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների, միջազգային և այլ կազմակերպությունների իրավասու մարմինների ներկայացուցիչների հետ հանդիպումներին, խորհրդաժողովներին, ինչպես նաև հանդես է գալիս առաջարկություններով, զեկուցումներով, հաշվետվություններով,

10) իրականացնում է սույն կարգով և իրավական այլ ակտերով սահմանված այլ պարտականություններ:

18. Վարչության բաժնի պետի տեղակալը անմիջականորեն ենթակա և հաշվետու է վարչության բաժնի պետին: Վարչության բաժնի պետի տեղակալի բացակայության դեպքում նրան փոխարինում է վարչության բաժնի պետի կողմից առաջարկված և սահմանված կարգով նշանակված պաշտոնատար անձը:

19. Վարչության բաժնի պետի տեղակալը իրեն վերապահված լիազորությունների սահմաններում, ինչպես նաև բաժնի պետի հանձնարարությամբ, բացահայտում, վերլուծում և գնահատում է բաժնի առջև դրված գործառնություններից բխող գործնական և մասնագիտական նշանակության խնդիրներ՝ դրանց տալով ստեղծագործական և այլընտրանքային լուծումներ:

Վարչության բաժնի պետի տեղակալը՝

1) բաժնի պետին ներկայացնում է առաջարկություններ աշխատանքների կազմակերպման, կատարելագործման, կատարողական կարգապահության ամրապնդման և աշխատանքային ծրագրերի վերաբերյալ, հետևում է բաժնի ծառայողների կատարողական կարգապահությանը, բաժնի պետին զեկուցում է ընթացիկ գործունեության վերաբերյալ,

2) իրականացնում է հսկողություն քրեակատարողական հիմնարկների համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների կողմից տարվող աշխատանքների վերաբերյալ տեղեկատվության (հաշվառման, ամփոփիչ

վիճակագրական) տրամադրման, հավաքագրման, վերլուծության աշխատանքների կազմակերպման նկատմամբ,

3) ամփոփում է բաժնի ծառայողների կողմից հիմնարկներում իրականացրած ստուգայցերի և ուսումնասիրությունների արդյունքներով կազմված տեղեկանքները և առաջարկություններ ներկայացնում բաժնի պետին համապատասխան հիմնարկի բաժնի աշխատանքներում տեղ գտած բացթողումների և թերությունների վերացման ուղղությամբ,

4) մասնակցում է Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների, միջազգային և այլ կազմակերպությունների իրավասու մարմինների ներկայացուցիչների հետ հանդիպումներին, խորհրդաժողովներին, ինչպես նաև հանդես է գալիս առաջարկություններով, զեկուցումներով, հաշվետվություններով,

5) իրականացնում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, միջազգային, հասարակական, բարեգործական և այլ կազմակերպությունների հետ համագործակցության կազմակերպման աշխատանքներ,

6) մասնակցում է ոլորտը կանոնակարգող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի մշակման աշխատանքներին,

7) իրականացնում է սույն կարգով և իրավական այլ ակտերով սահմանված այլ պարտականություններ:

20. Վարչության բաժնի գլխավոր մասնագետն անմիջականորեն ենթակա և հաշվետու է վարչության բաժնի պետին: Վարչության բաժնի գլխավոր մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է վարչության բաժնի պետի կողմից առաջարկված և սահմանված կարգով նշանակված վարչության բաժնի մասնագետներից մեկը:

21. Վարչության բաժնի գլխավոր մասնագետը իրեն վերապահված լիազորությունների սահմաններում, ինչպես նաև բաժնի պետի հանձնարարությամբ, բացահայտում, վերլուծում և գնահատում է բաժնի առջև դրված գործառնություններից բխող մասնագիտական նշանակության խնդիրներ, ինչպես նաև դրանց տալիս է ստեղծագործական և այլընտրանքային լուծումներ: Մասնավորապես, վարչության բաժնի գլխավոր մասնագետը վարչության բաժնի պետի հանձնարարությամբ, բացի սույն կարգի 20-րդ կետում նշված գործառնություններից պարտավոր է նաև`

1) ուսումնասիրել դատապարտյալների ներման խնդրագրերի վերաբերյալ նյութերը և ապահովել դրանց պատշաճ կարգով և ժամանակին ներկայացումը Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմ,

2) վերահսկել քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների կազմակերպումը, կատարելագործել այդ աշխատանքների իրականացման մեթոդներն ու ձևերը, մշակել աշխատանքի նոր մեթոդներ,

3) մասնակցել քրեակատարողական հիմնարկներ և մարմիններ կատարվող ուսումնասիրություններին և ստուգայցերին, դրանց արդյունքների վերաբերյալ ներկայացնել տեղեկանքներ,

4) մասնակցել քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում կալանավորված անձանց և դատապարտյալների օգտակար զբաղվածությանն ուղղված նախաձեռնությունների զարգացման և իրականացման աշխատանքներին,

5) կազմակերպել զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների այցերը քրեակատարողական հիմնարկներ և մարմիններ,

6) վարչությունից դուրս հանդես գալ որպես ներկայացուցիչ, մասնակցել Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների, միջազգային և այլ կազմակերպությունների իրավասու մարմինների ներկայացուցիչների հետ հանդիպումներին, խորհրդակցություններին, գիտաժողովներին, սեմինարներին, ինչպես նաև հանդես գալ առաջարկություններով, զեկուցումներով, հաշվետվություններով,

7) կալանավորված անձանց և դատապարտյալների սոցիալական հիմնախնդիրների կարգավորման նպատակով համագործակցել տեղական ինքնակառավարման մարմինների, սոցիալական ապահովության պետական մարմինների, զբաղվածության կենտրոնների, միջազգային, հասարակական, հոգևոր-կրոնական և այլ կազմակերպությունների հետ,

8) կազմակերպել թերթերի, ամսագրերի և այլ պարբերականների և գրականության առաքումը քրեակատարողական հիմնարկներ, յուրաքանչյուր կիսամյակ գրավոր հաշվետվություն ներկայացնել վարչության բաժնի պետին կատարված աշխատանքների վերաբերյալ, ներկայացնել առաջարկություններ կատարվող աշխատանքները կատարելագործելու, աշխատանքային ծրագրերում փոփոխություններ և լրացումներ կատարելու ուղղությամբ,

9) կիսամյակային և տարեկան հաշվետվությունների հիման վրա վերլուծել քրեակատարողական հիմնարկների և մարմինների բաժինների կամ խմբերի գործունեությունը, դրանց արդյունքներով ներկայացնել առաջարկություններ,

10) վարչության բաժնի պետին զեկուցել ընթացիկ աշխատանքների վերաբերյալ,

11) իրականացնել իրավական այլ ակտերով սահմանված այլ պարտականություններ:

22. Վարչության բաժնի առաջատար մասնագետը անմիջականորեն ենթակա և հաշվետու է բաժնի պետին:

Վարչության բաժնի առաջատար մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է վարչության բաժնի պետի կողմից առաջարկված և սահմանված կարգով նշանակված վարչության բաժնի մասնագետներից մեկը:

23. Վարչության բաժնի առաջատար մասնագետը վարչության բաժնի պետի հանձնարարությամբ, բացի սույն կարգի 22-րդ կետում նախատեսված գործառույթներից, պարտավոր է նաև՝

1) մասնակցել վարչության բաժնի առջև դրված գործառույթներից բխող հիմնախնդիրների լուծմանը և որոշումների ընդունմանը,

2) այցելություններ կատարել քրեակատարողական հիմնարկներ և մարմիններ, վեր հանել քրեակատարողական հիմնարկների և մարմինների բաժինների կամ խմբերի աշխատանքներում տեղ գտած թերություններն ու բացթողումները, դրանց



վերացման ուղղությամբ համապատասխան օգնություն ցուցաբերել քրեակատարողական հիմնարկների և մարմինների բաժինների կամ խմբերի ծառայողներին,

3) մասնակցել վարչության բաժնի գործունեությանն առնչվող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի մշակման աշխատանքներին,

4) օժանդակել վարչության բաժնի ավելի ցածր պաշտոն զբաղեցնող քրեակատարողական ծառայողներին, ինչպես նաև վարչության բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցել վարչության բաժնի աշխատանքների ծրագրմանը,

5) մասնագիտական և մեթոդական աջակցություն ցուցաբերել քրեակատարողական հիմնարկի կամ մարմնի բաժնի կամ խմբի աշխատողներին,

6) իրականացնել իրավական այլ ակտերով սահմանված այլ պարտականություններ:

24. Վարչության բաժնի առաջին կարգի մասնագետը անմիջականորեն ենթակա և հաշվետու է վարչության բաժնի պետին:

Վարչության բաժնի առաջին կարգի մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է վարչության բաժնի պետի կողմից առաջարկված և սահմանված կարգով նշանակված վարչության բաժնի մասնագետներից մեկը:

25. Վարչության բաժնի առաջին կարգի մասնագետը վարչության բաժնի պետի հանձնարարությամբ պարտավոր է՝

1) մասնակցել վարչության բաժնի առջև դրված գործառնություններից բխող խնդիրների վերլուծմանը և գնահատմանը,

2) վարչության բաժնի ներսում շփվել իր լիազորությունների շրջանակներում,

3) վարչության ներսում շփվել վարչության այլ կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների և աշխատողների հետ և հանդես գալ որպես ներկայացուցիչ իր լիազորությունների շրջանակներում,

4) մասնակցել վարչության բաժնի խորհրդակցություններին և բաժնի ընդհանուր գործունեությանը վերաբերող այլ աշխատանքներին,

5) յուրաքանչյուր կիսամյակ գրավոր հաշվետվություն ներկայացնել վարչության բաժնի պետին կատարված աշխատանքների վերաբերյալ,

6) վարել վարչության բաժնի գործունեությանն առնչվող նամակագրությունը,

7) օրենսդրությամբ սահմանված ժամկետներում կազմել քաղաքացիների առաջարկությունների, դիմումների և բողոքների պատասխանների նախագծեր,

8) մասնակցել քրեակատարողական հիմնարկների և մարմինների բաժինների կամ խմբերի աշխատանքներում տեղ գտած բացթողումների և թերությունների վերացման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներին,

9) իրականացնել իրավական այլ ակտերով սահմանված այլ պարտականություններ:

26. Վարչության բաժնի գլխավոր, առաջատար և առաջին կարգի մասնագետը վարչության բաժնի աշխատանքների կազմակերպման, ծրագրման, համակարգման, ղեկավարման և վերահսկման լիազորություններ չունի:

27. Վարչության բաժնի գլխավոր, առաջատար և առաջին կարգի մասնագետը պատասխանատվություն է կրում օրենքների, այլ իրավական ակտերի պահանջները և իրեն վերապահված լիազորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, կամ վերազանցելու, ինչպես նաև տրված հանձնարարականները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

28. Վարչության բաժնի վարձու աշխատողները ենթակա և հաշվետու են վարչության բաժնի պետին: Վարչության բաժնի վարձու աշխատողները իրենց պարտականությունները կատարում են սահմանված կարգով կատարված աշխատանքի բաշխմանը համապատասխան և օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն են կրում իրենց պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

29. Հիմնարկի բաժնի կամ խմբի ղեկավարի՝ ծառայողական հարցերով ենթակայությունը սահմանվում է սույն կարգով և իրավական այլ ակտերով, իսկ սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների հարցերով վերջինս ենթակա և հաշվետու է վարչության բաժնի պետին:

Հիմնարկի բաժնի կամ խմբի ղեկավարի բացակայության ժամանակ նրա պարտականությունները կատարում է վերջինիս կողմից առաջարկված և սահմանված կարգով նշանակված պաշտոնատար անձը:

Հիմնարկի բաժնի կամ խմբի ղեկավարը պարտավոր է՝

- 1) կատարել պարտականությունների և աշխատանքի բաշխում քրեակատարողական հիմնարկի բաժնի կամ խմբի մասնագետների միջև,
- 2) ապահովել կալանավորված անձանց և դատապարտյալների հետ սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների իրականացումը,
- 3) քրեակատարողական հիմնարկի բաժնում կամ խմբում կազմակերպել սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների ծրագրավորումը և դրանց կատարումը,
- 4) հետևել անհրաժեշտ մասնագիտական բոլոր փաստաթղթերի լրացման ճշտությանը և ամբողջականությանը,
- 5) քրեակատարողական հիմնարկի պետին եզրակացություն ներկայացնել կալանավորված անձի կամ դատապարտյալի հոգեբանական համատեղելիության վերաբերյալ,
- 6) քրեակատարողական հիմնարկի պետին միջնորդություն ներկայացնել պատժի հետագա կրման համար դատապարտյալին կալանավորվածներին պահելու վայրի տեխնիկատնտեսական սպասարկման աշխատանքներում ներգրավելու նպատակահարմարության վերաբերյալ,
- 7) պատժի հետագա կրման համար ուղղիչ հիմնարկ ուղարկելու նպատակով համապատասխան դատապարտյալի վերաբերյալ բնութագիր ներկայացնել քրեակատարողական հիմնարկի պետին,
- 8) վարչության բաժնի պետին ներկայացնել քրեակատարողական հիմնարկի պետի կողմից հաստատված կիսամյակային կամ տարեկան հաշվետվություն՝

քրեակատարողական հիմնարկի բաժնի կամ խմբի գործունեության վերաբերյալ հաշվետու ժամանակահատվածի ավարտից հետո յոթնօրյա ժամկետում,

9) կալանավորված անձանց և դատապարտյալների սոցիալական հիմնախնդիրների կարգավորման նպատակով ապահովել համագործակցությունը այլ քրեակատարողական հիմնարկների բաժինների կամ խմբերի, տեղական ինքնակառավարման մարմինների, սոցիալական ապահովության պետական մարմինների, զբաղվածության կենտրոնների, միջազգային, հասարակական, հոգևոր-կրոնական և այլ կազմակերպությունների հետ,

10) անհրաժեշտության դեպքում կազմակերպել և պարբերաբար անցկացնել խորհրդակցություններ,

11) օրենսդրությամբ սահմանված կարգով ընթացք տալ քաղաքացիների առաջարկություններին, դիմումներին և բողոքներին,

12) իրականացնել սույն կարգով և իրավական այլ ակտերով սահմանված այլ պարտականություններ:

30. Հիմնարկի բաժնի կամ խմբի գլխավոր, առաջատար և առաջին կարգի մասնագետը ենթակա կամ հաշվետու է քրեակատարողական հիմնարկի բաժնի կամ խմբի ղեկավարին:

Հիմնարկի բաժնի կամ խմբի գլխավոր, առաջատար և առաջին կարգի մասնագետը պարտավոր է՝

1) մասնակցել հիմնարկի բաժնի կամ խմբի կողմից իրականացվող սոցիալական, հոգեբանական կամ իրավական աշխատանքների իրականացմանը,

2) կազմակերպել թերթերի, ամսագրերի և այլ պարբերականների ու գրականության ստացումը և դրանք կալանավորված անձանց ու դատապարտյալներին տրամադրումը,

3) իրականացնել այցեր սոցիալական, հոգեբանական և իրավական օգնության կարիք ունեցող կալանավորված անձանց և դատապարտյալներին, արդյունքների մասին տեղեկացնել քրեակատարողական հիմնարկի բաժնի կամ խմբի ղեկավարին,

4) կալանավորվածի կամ դատապարտյալի մոտ հոգեկան հիվանդության նախանշանների, սահմանային վիճակների կամ ինքնավնասման հակումների առկայության դեպքում այդ մասին անհապաղ զեկուցել քրեակատարողական հիմնարկի բաժնի կամ խմբի ղեկավարին,

5) կալանավորվածին կամ դատապարտյալին անհրաժեշտ տեղեկատվություն տրամադրել իր իրավունքների և պարտականությունների, քրեակատարողական հիմնարկի ներքին կանոնակարգի վերաբերյալ,

6) միջոցներ ձեռնարկել կալանավորված կամ դատապարտյալի՝ օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված իրավունքների ապահովման ուղղությամբ,

7) կազմել կալանավորվածի կամ դատապարտյալի հետ իրականացված սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների վերաբերյալ փաստաթղթերը,

8) օրենսդրությամբ սահմանված ժամկետներում կազմել քաղաքացիների առաջարկություններին, դիմումների և բողոքների պատասխանների նախագծեր,

9) իրականացնել սույն կարգով և այլ իրավական ակտերով սահմանված այլ պարտականություններ:

31. Հիմնարկի բաժնի կամ խմբի գլխավոր, առաջատար և առաջին կարգի մասնագետը քրեակատարողական հիմնարկի բաժնի կամ խմբի աշխատանքների կազմակերպման, ծրագրման, համակարգման, ղեկավարման և վերահսկման լիազորություններ չունի:

Հիմնարկի բաժնի կամ խմբի գլխավոր, առաջատար և առաջին կարգի մասնագետը պատասխանատվություն է կրում օրենքների, այլ իրավական ակտերի պահանջները և իրեն վերապահված լիազորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, կամ վերազանցելու, ինչպես նաև տրված հանձնարարականները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

Հիմնարկի բաժնի կամ խմբի վարձու աշխատողները ենթակա և հաշվետու են քրեակատարողական հիմնարկի բաժնի կամ խմբի ղեկավարին: Հիմնարկի բաժնի կամ խմբի վարձու աշխատողները իրենց պարտականությունները կատարում են սահմանված կարգով կատարված աշխատանքի բաշխմանը համապատասխան և օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն են կրում իրենց պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

## **Բ Ա Ժ Ի Ն 2**

### **ՍՈՑԻԱԼԱԿԱՆ, ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ**

## **Գ Լ ՈՒ Խ 4**

### **ՍՈՑԻԱԼԱԿԱՆ, ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾՆԵՐԻ ՀԵՏ**

32. Կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու ժամանակ կալանավորվածների հետ իրականացվող սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքները կազմակերպվում են երեք փուլով՝

- 1) նախնական,
- 2) ընթացիկ,
- 3) ավարտական:

33. Նախնական փուլը սկսվում է կալանավորվածին՝ կալանավորվածներին պահելու վայր ընդունելու պահից և ավարտվում կալանավորվածին կարանտինային բաժանմունքից տեղափոխելով: Սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքները նախնական փուլում ներառում են՝

1) կալանավորվածին տվյալ քրեակատարողական հիմնարկ ընդունելուց անմիջապես հետո հոգեբանական աշխատանքներ իրականացնելը՝ ուղղված սթրեսածին հոգեվիճակների հաղթահարմանը: Կալանավորվածի մոտ հոգեկան

հիվանդության նախանշանների, սահմանային վիճակների կամ ինքնավնասման հակումների առկայության դեպքում քրեակատարողական հիմնարկի բաժնի կամ խմբի ղեկավարը այդ մասին եզրակացություն է ներկայացնում քրեակատարողական հիմնարկի պետին,

2) կալանավորվածին իր իրավունքների և պարտականությունների, քրեակատարողական հիմնարկի ներքին կանոնակարգի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն տրամադրելը՝ իրազեկելու մասին տեղեկանքը՝ (սույն կարգին կից Ձև 1) կցելով նրա անձնական գործին,

3) կալանավորման հետևանքով սոցիալական և իրավական կարգավիճակի, հոգեբանական վիճակի փոփոխությամբ պայմանավորված՝ կալանավորվածին սոցիալական, հոգեբանական, իրավական աջակցություն ցուցաբերելը: Այդ աշխատանքը ներառում է խորհրդատվական գրույցների իրականացումը, տեղեկատվության տրամադրումը,

4) կալանավորվածի կարիքներն ուսումնասիրելը և գնահատելը, դրա հիման վրա բացահայտված առավել հրատապ խնդիրների լուծման ուղղությամբ անհրաժեշտ միջոցառումներ իրականացնելը, այդ թվում՝ կալանավորվածի ընտանիքի անդամների կամ նրա կողմից նշված այլ անձանց հետ կապի հաստատումը, հոգեկան շեղումներ, սահմանային վիճակներ ունեցող կալանավորվածների վարքի կամ այլ խնդիրների քննարկումը հոգեբույժի հետ, ինչպես նաև կալանավորվածին պատշաճ նյութակենցադային, անձնական հիգիենայի պայմաններին, սննդով ապահովելուն հետևելը, դրանց բարելավման վերաբերյալ համապատասխան առաջարկություններ ներկայացնելը: Կալանավորված անձի հետ աշխատանքները գրանցվում են կալանավորվածի և դատապարտյալի անհատական քարտում (սույն կարգին կից Ձև 2), որը հաստատվում է հիմնարկի պետի կողմից,

5) խցերում տեղաբաշխելու նպատակով, կալանավորված անձանց սոցիալ-հոգեբանական համատեղելիությունը որոշելը և քրեակատարողական հիմնարկի պետին եզրակացություն ներկայացնելը: Մասնագիտական մեթոդների և մեթոդիկաների միջոցով բացահայտվում են կալանավորվածների անհատական հոգեբանական առանձնահատկությունները: Եզրակացությունը կցվում է կալանավորվածի անձնական գործին:

34. Ընթացիկ փուլն սկսվում է նախնական փուլի ավարտից հետո և ավարտվում է կալանավորվածներին պահելու վայրից օրենքով սահմանված կարգով կալանավորվածին ազատելով կամ մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելով:

Սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներն ընթացիկ փուլում ներառում են՝

1) անհատական ընդունելություններ կազմակերպելը: Անհատական ընդունելությունը կատարվում է կալանավորվածի դիմումի հիման վրա, ինչպես նաև քրեակատարողական հիմնարկի բաժնի կամ խմբի մասնագետների նախաձեռնությամբ: Քննարկվում են կալանավորվածին հուզող խնդիրները և դրանց լուծման ուղղությամբ ձեռնարկվում են համապատասխան միջոցներ: Իրականացված

աշխատանքները գրանցվում են «Անհատական ընդունելությունների գրանցման» մատյանում (սույն կարգին կից Ձև 3),

2) կալանավորվածի նյութակենցադային պայմաններին, սննդին, բժշկական սպասարկմանը և անձնական հիգիենայի պահպանմանը հետևելը, դրանց բարելավման ուղղությամբ քրեակատարողական հիմնարկի մյուս ստորաբաժանումների հետ համատեղ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելը,

3) կալանավորվածի՝ օրենքով նախատեսված իրավունքների ապահովմանը հետևելը՝ նրան իր իրավունքների և պարտականությունների վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն տրամադրելով: Այդ նպատակով կալանավորվածներին պահելու վայրի համապատասխան տեղամասում կամ խցում փակցվում է տեղեկատվություն՝ կալանավորվածների հիմնական իրավունքների և պարտականությունների վերաբերյալ,

4) խցերում կալանավորվածների միջև կոնֆլիկտային հարաբերությունների կանխարգելմանն ու կարգավորմանն ուղղված աշխատանքներ կազմակերպելը, որոնք ներառում են խցում պահվող կալանավորվածների հետ անհատական և խմբային աշխատանքի անցկացումը՝ ուղղված ներխմբային դինամիկայի պահպանմանը,

5) առավել բարձր հոգեկան լարվածություն, ագրեսիվություն ցուցաբերելու կամ ագրեսիվ վարք ունենալու դեպքում կալանավորվածների հետ հատուկ աշխատանքներ իրականացնելը: Անհրաժեշտության դեպքում քրեակատարողական հիմնարկի բաժնի կամ խմբի մասնագետը քրեակատարողական հիմնարկի մյուս ծառայողներին տեղեկատվություն է տրամադրում նման անձանց վերաբերյալ,

6) կալանավորվածի կողմից սննդի ընդունումից հրաժարվելու, ինքնավնասման, հիվանդության սիմուլյացիայի, արգելված այլ գործողություններ կատարելու դեմ կանխարգելիչ մասնագիտական՝ հոգեբանական և իրավական աշխատանքներ իրականացնելը,

7) կալանավորվածի՝ սննդի ընդունումից հրաժարվելու դեպքում սահմանված կարգով աշխատանքներ իրականացնելը,

8) կալանավորվածի՝ քրեակատարողական հիմնարկի գրադարանից օգտվելու, իր հաշվին բաժանորդագրության կամ այլ ձևով գրականություն, պարբերական մամուլի հրատարակություններ ձեռք բերելու համար անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելը: Այդ հարցերում կալանավորվածին ցուցաբերվում է հնարավոր օժանդակություն,

9) կալանավորվածին վճարովի կամ անվճար բժշկական, հիգիենիկ և կենցադային լրացուցիչ ծառայություններից օգտվելու հարցերում օժանդակելը,

10) կալանավորվածի՝ արտաքին աշխարհի հետ կապի ստեղծմանը, պահպանմանն ու զարգացմանը օժանդակելը: Այդ նպատակով քրեակատարողական հիմնարկի բաժինը կամ խումբը կազմակերպում է՝

ա. խորհրդատվության տրամադրում՝ կալանավորվածի և նրա մերձավոր ազգականների միջև կապի բացակայության կամ վերջիններիս կողմից կապ պահպանելուց հրաժարվելու դեպքում: Անհրաժեշտության դեպքում քրեակատարողական հիմնարկի բաժնի կամ խմբի մասնագետը կազմակերպում է

կալանավորվածի մերձավոր ազգականների այցելություն կամ հեռախոսագրույց, ինչը նախապես համաձայնեցվում է կալանավորվածի հետ: Կալանավորվածի մերձավոր ազգականների այցելության մասին տեղեկանքը կցվում է կալանավորվածի անձնական գործին (սույն կարգին կից Ձև 4),

բ. տեսակցություններ կալանավորվածի և նրա մերձավոր ազգականների կամ այլ անձանց միջև: Անհրաժեշտության դեպքում քրեակատարողական հիմնարկի բաժնի կամ խմբի ղեկավարը կազմում է տեսակցությունների ամենամսյա ժամանակացույց, որը հաստատում է քրեակատարողական հիմնարկի պետը,

գ. կալանավորվածի կողմից կապի հնարավոր միջոցներից օգտվելը: Անհրաժեշտության դեպքում քրեակատարողական հիմնարկի բաժնի կամ խմբի ղեկավարը կազմում է հեռախոսակապի տրամադրման ժամանակացույց, որը հաստատում է քրեակատարողական հիմնարկի պետը: Հեռախոսազանգերի տրամադրման հաշվառումը կատարվում է համապատասխան մատյանում (սույն կարգին կից Ձև 5),

դ. «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում կալանավորվածի օգտվելը կարճաժամկետ մեկնումներից,

11) կալանավորվածի քաղաքացիաիրավական գործարքներին մասնակցելու, ինչպես նաև օրենքով սահմանված այլ իրավունքներից օգտվելու դեպքում իրավաբանական խորհրդատվություն տրամադրելը,

12) հաշմանդամ կալանավորվածի հետ հաշմանդամությամբ պայմանավորված աշխատանքներ իրականացնելը,

13) հղի կանանց կամ իրենց մոտ մինչև երեք տարեկան երեխա պահող կալանավորված անձանց հետ համապատասխան աշխատանքներ իրականացնելը: Նախապատրաստական աշխատանքներ են կատարվում երեխայի ծննդից հետո նրա հետագա խնամքի կազմակերպման ուղղությամբ, խորհրդատվություն է տրամադրվում երեխայի դաստիարակության իրականացման վերաբերյալ՝ հաշվի առնելով տարիքային առանձնահատկությունները,

14) անչափահաս կալանավորվածի հետ ուսումնադաստիարակչական աշխատանքներ իրականացնելը,

15) տույժի միջոցի ենթարկված կալանավորվածի հետ անհատական աշխատանքներ կատարելը, որոնք ներառում են խախտման պատճառները բացահայտելը, հետագայում խախտումները բացառելու նպատակով խորհրդատվություն տրամադրելը: Նշանակված տույժի միջոցը վաղաժամկետ հանելու վերաբերյալ վերադասության կարգով քրեակատարողական հիմնարկի բաժնի կամ խմբի ղեկավարը միջնորդություն է ներկայացնում քրեակատարողական հիմնարկի պետին:

Կալանավորվածի նկատմամբ կիրառված տույժի և խրախուսանքի միջոցները գրանցվում են «Տույժերի և խրախուսանքների հաշվառման» մատյանում (սույն կարգին կից Ձև 6),

16) կալանավորվածի տարրական, հեռակա ընդհանուր միջնակարգ և բարձրագույն կրթությունը կազմակերպելու կամ շարունակելու ուղղությամբ իրականացվող աշխատանքների աջակցելը: Կալանավորվածի ուսումնական գործընթացն իրականացնելու և դրա շարունակականությունն ապահովելու նպատակով կապ է հաստատվում համապատասխան ուսումնական հաստատության հետ, միջոցներ են ձեռնարկվում հնարավորության դեպքում կրթությունը քրեակատարողական հիմնարկում կազմակերպելու ուղղությամբ,

17) հոգևոր-կրոնական միջոցառումներ կազմակերպելուն աջակցելը, ներառյալ՝ հոգևորականներին քրեակատարողական հիմնարկ հրավիրելը և կալանավորվածի հետ հանդիպումներ կազմակերպելը,

18) կալանավորվածներին պահելու վայրեր այցելած զանգվածային լրատվության միջոցների, հասարակական, միջազգային կամ այլ կազմակերպությունների ներկայացուցիչների հետ հանդիպումներ կազմակերպելը, նրանց կողմից տվյալ քրեակատարողական հիմնարկում իրականացվող աշխատանքներին հնարավոր աջակցություն ցուցաբերելը: Այցելությունները գրանցվում են «Զանգվածային լրատվության միջոցների, հասարակական, միջազգային և այլ կազմակերպությունների, հասարակական դիտորդների այցելությունների հաշվառման» մատյանում (սույն կարգին կից Ձև 7),

19) քրեակատարողական հիմնարկի այլ ստորաբաժանումների հետ կալանավորվածին առնչվող խնդիրները քննարկելը, դրանց լուծման ուղղությամբ համատեղ միջոցառումներ իրականացնելը:

35. Ավարտական փուլն սկսվում է ընթացիկ փուլի ավարտից հետո՝ կալանավորվածի նկատմամբ մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից և ավարտվում է դատապարտյալին ուղղիչ հիմնարկ ուղարկելով:

Սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներն ավարտական փուլում ներառում են՝

1) պատժի հետագա կրման համար քրեակատարողական այլ հիմնարկներ ուղարկման ենթակա դատապարտյալին հոգեբանական խորհրդատվական աջակցություն ցուցաբերելը,

2) պատժի հետագա կրման համար ուղղիչ հիմնարկ ուղարկելու նպատակով դատապարտյալի վերաբերյալ քրեակատարողական հիմնարկի պետին բնութագրի ներկայացնելը,

3) պատժի հետագա կրման համար դատապարտյալին կալանավորվածներին պահելու վայրի տեխնիկատնտեսական սպասարկման աշխատանքներում ներգրավելու նպատակահարմարության վերաբերյալ քրեակատարողական հիմնարկի պետին միջնորդություն ներկայացնելը: Տեխնիկատնտեսական սպասարկման աշխատանքներում ընդգրկված դատապարտյալների հետ սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներն իրականացվում են որոշակի ժամկետով ազատազրկման դատապարտված անձանց համար՝ սույն կարգով նախատեսված առանձնահատկություններով,



4) կալանավորվածներին պահելու վայրում գտնվելու ընթացքում կալանավորվածի հետ իրականացված սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների վերաբերյալ փաստաթղթերը նրա անձնական գործին կցելը:

## Գ Լ ՈՒ Խ 5

### ***ՍՈՑԻԱԼԱԿԱՆ, ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼՆԵՐԻ ՀԵՏ***

36. Սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքները դատապարտյալների հետ իրականացվում են՝ հաշվի առնելով դատարանի կողմից նշանակված պատժի տեսակը: Դրանք իրականացվում են Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված հետևյալ պատիժների կատարման ժամանակ՝

1) որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու,

2) հանրային աշխատանքների,

3) կալանքի,

4) որոշակի ժամկետով ազատազրկման,

5) ցմահ ազատազրկման:

37. Դատապարտյալների հետ իրականացվող սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքները որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու ձևով պատիժը կատարելու ժամանակ ներառում են՝

1) դատապարտյալին իր իրավունքների և պարտականությունների մասին իրազեկելը և դրանց ապահովմանը հետևելը՝ իրազեկելու մասին տեղեկանքը կցելով նրա անձնական գործին,

2) դատապարտյալին իր մասնագիտական հմտություններին և որակավորմանը համապատասխան նոր աշխատանքային գործունեության մեջ ընդգրկվելուն աջակցելը,

3) դատապարտյալի հոգեկան վիճակի բարելավմանն ուղղված հոգեբանական խորհրդատվական աշխատանքներ իրականացնելը:

38. Դատապարտյալների հետ իրականացվող սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքները հանրային աշխատանքները կատարելու ժամանակ ներառում են՝

1) դատապարտյալին իր իրավունքների և պարտականությունների մասին իրազեկելը և դրանց ապահովմանը հետևելը՝ իրազեկելու մասին տեղեկանքը կցելով նրա անձնական գործին,

2) դատապարտյալի մասնագիտական հմտությունները բացահայտելը, դրա հիման վրա նրա կողմից կատարվելիք աշխատանքների բնույթի նպատակահարմարության վերաբերյալ եզրահանգումներ կատարելը,

3) դատապարտյալի հետ վերջինիս կողմից աշխատանքների կատարումից չարամտորեն խուսափելը կանխելուն ուղղված հոգեբանական, իրավական խորհրդատվական աշխատանքներ իրականացնելը,

4) տեղական ինքնակառավարման մարմինների, ոչ առևտրային կազմակերպությունների հետ համագործակցությամբ հանրային աշխատանքների լուսաբանման միջոցառումներ իրականացնելը՝ ուղղված դատապարտյալի կողմից այդ աշխատանքների դերի և նշանակության գնահատմանը:

39. Դատապարտյալների հետ իրականացվող սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքները կալանքը կատարելու ժամանակ ներառում են՝

1) դատապարտյալին իր իրավունքների և պարտականությունների մասին իրազեկելը՝ այդ մասին տեղեկանքը կցելով նրա անձնական գործին,

2) դատապարտյալին քրեակատարողական հիմնարկ ընդունելուց անմիջապես հետո սթրեսային հոգեվիճակների հաղթահարմանն ուղղված հոգեբանական աշխատանքներ իրականացնելը,

3) դատապարտյալի կողմից ինքնավնասման, հիվանդության սիմուլյացիայի, արգելված այլ գործողություններ կատարելու դեմ կանխարգելիչ մասնագիտական՝ հոգեբանական և իրավական աշխատանքներ իրականացնելը,

4) դատապարտյալի սննդի ընդունումից հրաժարվելու դեպքում օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքներ իրականացնելը,

5) Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքի 80-րդ հոդվածով սահմանված անձնական բացառիկ հանգամանքների դեպքում դատապարտյալին հեռախոսակապից օգտվելու թույլտվություն տալու վերաբերյալ քրեակատարողական հիմնարկի բաժնի կամ խմբի ղեկավարի կողմից քրեակատարողական հիմնարկի պետին վերադասության կարգով միջնորդություն ներկայացնելը,

6) դատապարտյալի նյութակենցադային պայմաններին, սննդին, բժշկական սպասարկմանը և անձնական հիգիենայի պահպանմանը հետևելը, դրանց բարելավման ուղղությամբ քրեակատարողական հիմնարկի մյուս ստորաբաժանումների հետ համատեղ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելը,

7) դատապարտյալի, նրա մերձավոր ազգականների կամ այլ անձանց հետ դատապարտյալին հուզող խնդիրների շուրջ խորհրդատվական աշխատանքներ իրականացնելը,

8) դատապարտյալի՝ քրեակատարողական հիմնարկի գրադարանից և իր հաշվին պարբերական հրատարակություններից օգտվելու ուղղությամբ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելը:

40. Դատապարտյալների հետ իրականացվող սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքները որոշակի ժամկետով կամ ցմահ ազատազրկման ժամանակ կազմակերպվում են երեք փուլով՝

1) նախնական,

2) ընթացիկ,

3) ավարտական:

41. Նախնական փուլը սկսվում է դատապարտյալի քրեակատարողական հիմնարկ մուտք գործելու պահից և ավարտվում է կարանտինային բաժանմունքից տեղափոխելով:

Դատապարտյալների հետ իրականացվող սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքները նախնական փուլում ներառում են՝

1) դատապարտյալին իր իրավունքների և պարտականությունների, քրեակատարողական հիմնարկի ներքին կանոնակարգի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն տրամադրելը՝ այդ մասին տեղեկանքը (սույն կարգին կից Ձև 1) կցելով նրա անձնական գործին,

2) դատապարտյալին պատժի կրմանը նախապատրաստելուն ուղղված հոգեբանական աշխատանքներ իրականացնելը,

3) դատապարտյալի՝ կարանտինային բաժանմունքում տեղավորվելուց հետո նյութակենցադային պայմաններին, սննդին, բժշկական սպասարկմանը և անձնական հիգիենայի պահպանմանը հետևելը, դրանց բարելավման ուղղությամբ քրեակատարողական հիմնարկի մյուս ստորաբաժանումների հետ համատեղ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելը,

4) դատապարտյալին սոցիալ-հոգեբանական համատեղելիության առումով նախնական գնահատական տալը: Նախնական գնահատականի հիման վրա քրեակատարողական հիմնարկի բաժնի կամ խմբի ղեկավարը եզրակացություն է ներկայացնում քրեակատարողական հիմնարկի պետին՝ դատապարտյալին կարանտինային բաժանմունքից տեղափոխելու և կոնկրետ խմբում տեղաբաշխելու վերաբերյալ:

42. Ընթացիկ փուլը սկսվում է նախնական փուլի ավարտից հետո և ավարտվում է պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հնարավոր ժամկետից կամ պատիժն ամբողջությամբ կրելու ժամկետից երեք ամիս առաջ:

Դատապարտյալների հետ իրականացվող սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներն ընթացիկ փուլում ներառում են՝

1) դատապարտյալի սոցիալական և հոգեբանական առանձնահատկություններն ուսումնասիրելը, ախտորոշելը և կարիքները գնահատելը: Դատապարտյալի հետ կատարված սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքները գրանցվում են «Կալանավորված անձի և դատապարտյալի անհատական քարտում» (սույն կարգին կից Ձև 2), որից հետո կազմվում է դատապարտյալի ուղղման գործընթացի ծրագիր: Ուղղման գործընթացի ծրագիրը քրեակատարողական հիմնարկի բաժնի կամ խմբի մասնագետը կազմում է դատապարտյալին տվյալ խմբում տեղաբաշխելուց հետո մեկից երեք ամսվա ընթացքում: Դատապարտյալին պատժի կրումից օրենքով սահմանված կարգով ազատելու, ինչպես նաև քրեակատարողական այլ հիմնարկ տեղափոխելու ժամանակ անհատական քարտը և դատապարտյալի հետ իրականացված սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների վերաբերյալ փաստաթղթերը կցվում են նրա անձնական գործին,

2) դատապարտյալի նյութակենցադային պայմաններին, սննդին, բժշկական սպասարկմանը և անձնական հիգիենայի պահպանմանը հետևելը, դրանց բարելավման ուղղությամբ քրեակատարողական հիմնարկի մյուս ստորաբաժանումների հետ համատեղ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելը,

3) ընդունելություններ կազմակերպելը, որոնց ընթացքում քննարկվում են դատապարտյալին հուզող խնդիրները և դրանց լուծման ուղղությամբ ձեռնարկվում են համապատասխան միջոցներ,

4) դատապարտյալի՝ արտաքին աշխարհի հետ կապ ստեղծելուն, պահպանելուն և զարգացնելուն աջակցելը: Այդ նպատակով քրեակատարողական հիմնարկի բաժինը կամ խումբը կազմակերպում է՝

ա. խորհրդատվության տրամադրում՝ դատապարտյալի և նրա մերձավոր ազգականների միջև կապի բացակայության կամ վերջիններիս կողմից կապ պահպանելուց հրաժարվելու դեպքում: Անհրաժեշտության դեպքում քրեակատարողական հիմնարկի բաժնի կամ խմբի մասնագետը կատարում է դատապարտյալի մերձավոր ազգականների այցելություն կամ հեռախոսազրույց, ինչը նախապես համաձայնեցվում է դատապարտյալի հետ: Դատապարտյալի մերձավոր ազգականներին կատարված այցելության մասին կազմվում է տեղեկանք (սույն կարգին կից Ձև 4) և կցվում է դատապարտյալի անձնական գործին,

բ. կարճատև և երկարատև տեսակցություններ դատապարտյալի և նրա մերձավոր ազգականների կամ այլ անձանց միջև: Անհրաժեշտության դեպքում քրեակատարողական հիմնարկի բաժնի կամ խմբի ղեկավարը կազմում է երկարատև տեսակցությունների ժամանակացույց, որը հաստատում է քրեակատարողական հիմնարկի պետը,

գ. դատապարտյալների օգտվելը կապի միջոցներից, այդ թվում՝ հեռախոսակապից, նամակագրություն վարելը: Անհրաժեշտության դեպքում քրեակատարողական հիմնարկի բաժնի կամ խմբի ղեկավարը կազմում է հեռախոսակապի տրամադրման ժամանակացույց, որը հաստատում է քրեակատարողական հիմնարկի պետը,

դ. դատապարտյալի կարճաժամկետ մեկնում: Անհրաժեշտության դեպքում քրեակատարողական հիմնարկի բաժնի կամ խմբի ղեկավարը միջնորդություն է ներկայացնում քրեակատարողական հիմնարկի պետին կարճաժամկետ մեկնում տրամադրելու նպատակահարմարության վերաբերյալ,

ե. դատապարտյալի ուղղիչ հիմնարկի կամ այլ մանկատանը կամ համապատասխան այլ հաստատությունում գտնվող իր երեխայի կամ երեխաների հետ կապի ապահովման ուղղությամբ աշխատանքներ կատարելը,

5) դատապարտյալի քաղաքացիաիրավական գործարքներին մասնակցելու, ինչպես նաև օրենքով սահմանված այլ իրավունքներից օգտվելու դեպքում իրավաբանական խորհրդատվություն տրամադրելը,

6) տույժի ենթարկված դատապարտյալի հետ անհատական աշխատանքներ կատարելը, որոնք ներառում են խախտման պատճառները բացահայտելը, հետազայում խախտումները բացառելու նպատակով խորհրդատվություն

տրամադրելը: Նշանակված տույժը վաղաժամկետ հանելու վերաբերյալ քրեակատարողական հիմնարկի բաժնի կամ խմբի ղեկավարը միջնորդություն է ներկայացնում քրեակատարողական հիմնարկի պետին: Դատապարտյալի նկատմամբ կիրառված տույժի և խրախուսանքի միջոցները գրանցվում են «Տույժերի և խրախուսանքների հաշվառման» մատյանում (սույն կարգին կից Ձև 6),

7) անհրաժեշտության դեպքում՝ դատապարտյալների շրջանում հնարավոր կոնֆլիկտների կանխարգելման և լուծման ուղղությամբ անհատական և խմբային խորհրդատվություն տրամադրելը: Կոնֆլիկտների կանխարգելման աշխատանքներն իրականացվում են պարբերաբար: Կոնֆլիկտների կանխարգելումը ներառում է դատապարտյալների շրջանում ներքին լարվածության, միջանձնային անբարենպաստ հարաբերությունների բացահայտումը, որն իրականացվում է հետևողական դիտարկումների և անհատական գրույցների միջոցով: Դատապարտյալների հետ իրականացված խմբային աշխատանքները գրանցվում են «Սոցիալական, հոգեբանական և իրավական խմբային աշխատանքներում ընդգրկված, ընտանեկան բարդ խնդիրներ ունեցող դատապարտյալների հաշվառման» մատյանում (սույն կարգին կից Ձև 8),

8) դատապարտյալին պարբերաբար գնահատելը և նրա վերաբերյալ բնութագրեր կազմելը,

9) ռիսկայնության բարձր աստիճան ունեցող դատապարտյալների խմբերի հետ նպատակաուղղված ծրագրեր իրականացնելը: Նպատակաուղղված ծրագրերը մասնագիտական միջամտության երկարաժամկետ ձևեր են, որոնք կիրառվում են ռիսկայնության բարձր աստիճան ունեցող խմբերի հետ աշխատանքի ընթացքում և ուղղված են քրեածին հակումների վերացմանը: Ծրագրի հիմնական նպատակն է՝ անձին զինել ճանաչողական և վարքային այնպիսի հմտություններով, որոնք անհրաժեշտ են քրեածին և բացասական հակումներից ազատ կենսաձև ընտրելու և պահպանելու համար: Ծրագրի առաջնային խնդիրն է՝ ձեռք բերել դատապարտյալի գիտակցված որոշումը՝ ազատվել քրեածին վարքագծից և աշխատել հետագայում վերջինիս կրկին առաջացումը կանխելու ուղղությամբ: Ռիսկայնության բարձր աստիճան ունեցող դատապարտյալների վերաբերյալ գրանցում է կատարվում «Ռիսկայնության բարձր աստիճան ունեցող դատապարտյալների հաշվառման» մատյանում (սույն կարգին կից Ձև 9),

10) դատապարտյալին տեխնիկատնտեսական սպասարկման աշխատանքներում ներգրավելու նպատակահարմարության վերաբերյալ քրեակատարողական հիմնարկի բաժնի կամ խմբի ղեկավարի կողմից քրեակատարողական հիմնարկի պետին վերադասության կարգով միջնորդություն ներկայացնելը,

11) պատիժը կատարելու համար ուղղիչ հիմնարկի տեսակը մեկուսացվածության այլ աստիճանի փոխելու վերաբերյալ քրեակատարողական հիմնարկի բաժնի կամ խմբի ղեկավարի կողմից քրեակատարողական հիմնարկի պետին վերադասության կարգով միջնորդություն ներկայացնելը,

12) դատապարտյալի հիմնական և հեռակա բարձրագույն, հետբուհական մասնագիտական կրթությունը կազմակերպելու կամ շարունակելու ուղղությամբ

միջոցներ ձեռնարկելը: Դատապարտյալի ուսումնական գործընթացն իրականացնելու և դրա շարունակականությունն ապահովելու նպատակով կապ է հաստատվում համապատասխան ուսումնական հաստատության հետ: Միջոցներ են ձեռնարկվում ուղղիչ հիմնարկում դատապարտյալի նախնական մասնագիտական՝ արհեստագործական կրթությունը կազմակերպելու ուղղությամբ,

13) դատապարտյալի մտավոր, մասնագիտական, ֆիզիկական կարողությունները զարգացնելուն, ստեղծագործական ընդունակությունները բացահայտելուն նպաստող պայմաններ ստեղծելը և բարելավելը, այդ նպատակով ստեղծված դատապարտյալների ինքնագործ միավորումների գործունեությանը աջակցելը: Միջոցներ են ձեռնարկվում դատապարտյալի ստեղծագործ աշխատանքի արդյունքները ցուցադրելու և իրացնելու ուղղությամբ,

14) դատապարտյալների ազատ ժամանակն արդյունավետ տնօրինելու նպատակով մշակութային, մարզական և այլ բնույթի միջոցառումներ կազմակերպելը: Այդ աշխատանքները կարող են իրականացվել հասարակական, միջազգային և այլ կազմակերպությունների հետ համագործակցությամբ: Իրականացված միջոցառումները գրանցվում են «Մշակութային, մարզական, կրթական և այլ միջոցառումների, ստեղծագործող դատապարտյալների հաշվառման» մատյանում (սույն կարգին կից Ձև 10),

15) հոգևոր-կրոնական միջոցառումներ կազմակերպելուն աջակցելը, ներառյալ՝ հոգևորականներ քրեակատարողական հիմնարկ հրավիրելը և դատապարտյալի հետ հանդիպումներ կազմակերպելը,

16) դատապարտյալի աշխատանքային զբաղվածությանը նպաստելը, աշխատանքային իրավունքների պաշտպանությունն ապահովելը: Դատապարտյալին աշխատանքի ներգրավելիս հաշվի է առնվում նրա սոցիալական վիճակը, գույքային պարտավորությունների առկայությունը, մասնագիտությունը: Դատապարտյալի աշխատանքային գործունեության վերաբերյալ գրանցումներ է կատարվում «Աշխատանքներում ներգրավված դատապարտյալների հաշվառման» մատյանում (սույն կարգին կից Ձև 11),

17) դատապարտյալի սոցիալական ապահովության իրավունքի իրացման ուղղությամբ աշխատանքներ կազմակերպելը: Այդ նպատակով կենսաթոշակ նշանակելու, կենսաթոշակի տեսակը փոխելու և կենսաթոշակը վճարելու համար սահմանված կարգով նախապատրաստվում են համապատասխան փաստաթղթեր և դատապարտյալի գրավոր դիմումի հետ ներկայացվում հիմնարկի պետին,

18) մեղսունակությունը չբացառող հոգեկան հիվանդության նախանշաններ կամ ինքնավնասման կամ ինքնասպանության հակում ունեցող դատապարտյալի հետ կատարվելիք աշխատանքների ծրագիր մշակելը և այդպիսի դատապարտյալների նկատմամբ հսկողություն իրականացնելը՝ համապատասխան բժշկի հետ համագործակցությամբ,

19) հղի, կերակրող մայր կամ մինչև երեք տարեկան երեխա ունեցող դատապարտյալի հետ աշխատանքներ կազմակերպելը: Կարող են նախապատրաստական աշխատանքներ կատարվել ծննդից հետո երեխայի հետագա

խնամքի կազմակերպման ուղղությամբ, խորհրդատվություն տրամադրվել էր երեխայի դաստիարակության իրականացման վերաբերյալ՝ հաշվի առնելով, տարիքային առանձնահատկությունները,

20) դատապարտյալի համաձայնությամբ նրա՝ մինչև երեք տարեկան երեխային ազգականի, հոգաբարձության և խնամակալության մարմնի որոշմամբ՝ այլ անձանց խնամքին հանձնելու, իսկ երեք տարին լրանալուց հետո՝ դատապարտյալի ընտրությամբ մանկատուն կամ համապատասխան այլ հաստատություն ուղարկելու, ինչպես նաև ուղղիչ հիմնարկին կից մանկատանը պահվող երեխայի երեք տարին լրանալուց հետո մանկատանը երեխային պահելու ժամկետը մինչև ծնողի պատժի ժամկետի ավարտը երկարաձգելու անհրաժեշտության և նպատակահարմարության վերաբերյալ քրեակատարողական հիմնարկի բաժնի կամ խմբի ղեկավարի կողմից քրեակատարողական հիմնարկի պետին վերադասության կարգով միջնորդություն ներկայացնելը,

21) դատապարտյալ ծնողի հետ քրեակատարողական հիմնարկում համատեղ բնակվող երեխայի հանգստի և դաստիարակության կազմակերպման ուղղությամբ միջոցառումներ իրականացնելը,

22) անչափահաս դատապարտյալների համար ուսումնադաստիարակչական միջոցառումներ կազմակերպելը: Անչափահասների հետ աշխատանքում պարտադիր են դրական վարքագծի խրախուսումը և ամրապնդումը, կրթամշակութային և մարզական միջոցառումների կազմակերպումը,

23) ցմահ ազատազրկման դատապարտված անձանց հետ՝ պատժի առանձնահատկություններով պայմանավորված աշխատանքներ իրականացնելը: Ցմահ ազատազրկման դատապարտված անձանց հետ աշխատանքները նպատակ ունեն դատապարտյալի մոտ ձևավորել կյանքի իմաստավորման և արժևորման նոր ընկալում: Այդ աշխատանքները ներառում են անհատական և խմբային խորհրդատվությունը, անձնային զարգացում ապահովող մեթոդները, ագրեսիվության մակարդակը նվազեցնող աշխատանքի ձևերը, ինչպես նաև նպատակային այլ ուղիները և մեթոդները,

24) բռնության ենթարկված դատապարտյալի հետ աշխատանք իրականացնելը: Հոգեկան կամ ֆիզիկական բռնության ենթարկված դատապարտյալի հետ աշխատանքի նպատակը բռնության հետևանքով առաջացած հոգեբանական ցնցումները վերացնելն է և ճգնաժամը հաղթահարելը,

25) զանգվածային լրատվության միջոցների, հասարակական, միջազգային, բարեգործական կազմակերպությունների աջակցությամբ իրականացվող կրթական, մշակութային և այլ բնույթի միջոցառումների և ծրագրերի իրագործմանն ուղղված կազմակերպչական աշխատանքներ կատարելը: Այցելությունները գրանցվում են «Ձանգվածային լրատվության միջոցների, հասարակական, միջազգային և այլ կազմակերպությունների, հասարակական դիտորդների այցելությունների հաշվառման» մատյանում (սույն կարգին կից Ձև 7),

26) տասնութ տարին լրացած դատապարտյալի՝ բացասական վարքագիծ դրսևորելու դեպքում քրեակատարողական այլ հիմնարկ ուղարկելու

նպատակահարմարության վերաբերյալ քրեակատարողական հիմնարկի պետին քրեակատարողական հիմնարկի բաժնի կամ խմբի ղեկավարի կողմից վերադասության կարգով միջնորդություն ներկայացնելը,

27) քրեակատարողական հիմնարկի այլ բաժինների հետ դատապարտյալին առնչվող խնդիրները քննարկելը, դրանց լուծման ուղղությամբ համատեղ միջոցառումներ իրականացնելը:

Դատապարտյալների վերաբերյալ վարվում է «Դատապարտյալների այբբենական հաշվառման» մատյան (սույն կարգին կից Ձև 12):

43. Ավարտական փուլը սկսվում է ընթացիկ փուլի ավարտից հետո՝ դատապարտյալի պայմանական վաղաժամկետ ազատման, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հնարավոր ժամկետից կամ պատիժը լրիվ կրելու ժամկետից երեք ամիս առաջ և ավարտվում է պատժի կրումից ազատվելով:

Դատապարտյալների հետ իրականացվող սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներն ավարտական փուլում ներառում են՝

1) դատապարտյալին ազատման նախապատրաստելու ծրագիր կազմելը և ծրագրով նախատեսված կազմակերպչական բնույթի միջոցառումների կատարումն ապահովելը: Ազատման նախապատրաստելու ծրագրում ընդգրկվում են կազմակերպչական և խորհրդատվական-ուսուցողական համալիր միջոցառումներ: Խորհրդատվական-ուսուցողական միջոցառումները կարող են կազմակերպվել դասընթացների կամ անհատական գրույցների ձևով և ընդգրկում են հետևյալ հիմնահարցերը՝

ա. առողջության պահպանումը և անձնական հիգիենան, համաճարակների կանխումը, հնարավոր սթրեսային իրավիճակներին դիմակայումը, մարդու իմունային անբավարարության վիրուսի կանխարգելումը, ֆիզիկական պատրաստականությունը, միջանձնային հաղորդակցման հմտությունների ուսուցումը,

բ. զբաղվածությունը,

գ. տեղեկատվությունը տեղական ինքնակառավարման մարմինների վերաբերյալ: Պատժի կրումից հնարավոր ազատվելուց 10 օր առաջ դատապարտյալին մանրամասն տեղեկատվություն է տրամադրվում իր բնակության վայրի զբաղվածության տարածքային կենտրոն ներկայանալու և հաշվառվելու կարգի մասին, նրան բացատրվում է կենտրոնի կողմից օրենքով սահմանված կարգով տրամադրվող բոլոր ծառայությունների, այդ թվում՝ գործազրկության նպաստ, սնունդ աշխատանքի դիմաց, անվճար կրթություն և վարձատրվող աշխատանք ստանալու հնարավորության վերաբերյալ,

դ. անձնական զարգացումը, ամուսնության, ընտանիքի, երեխաների դաստիարակության հետ կապված և այլ հմտություններ, որոնք կօգնեն նրան պատժից ազատվելուց հետո կազմակերպելու հետագա կյանքը,

ե. պատժից ազատվելուց հետո հնարավոր դժվարությունների մասին տեղեկացնելը և դրանց նախապատրաստելը: Դատապարտյալներին



խորհրդատվություն է տրամադրվում դատվածության բացասական սոցիալական հետևանքների մասին, այդ թվում՝ ազատվելուց հետո նրա նկատմամբ համայնքի կողմից հնարավոր անվստահության, անտարբերության, մերժողականության, աշխատանքի տեղավորման հարցում գործատուի, տարբեր կազմակերպությունների կողմից նախկին ազատագրկվածների նկատմամբ հնարավոր խտրական վերաբերմունքի վերաբերյալ: Աշխատանքներ են տարվում ուժեղացնելու նրա կամային հատկանիշները, ձևավորելու այս երևույթները հաղթահարելու պատրաստականություն և վստահություն,

2) դատապարտյալին աշխատանքային, սոցիալ-կենցաղային ապահովման հարցերում օժանդակելը, ինչպես նաև պատժի կրումից ազատվելուց հետո դատապարտյալի հասարակությանը վերաինտեգրվելու, նրան շրջապատող միջավայրում գտնվող անձանց հետ փոխհարաբերությունների բարելավման ուղղությամբ միջոցառումներ իրականացնելը: Դատապարտյալի դիմումի (սույն կարգին կից Ձև 13) հիման վրա նրա պատժից առաջիկա ազատվելու և աշխատանք փնտրելու մասին քրեակատարողական հիմնարկի պետին տեղեկացվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Հայաստանի Հանրապետության զբաղվածության ծառայություն» գործակալության (զբաղվածության պետական ծառայության) դատապարտյալի ընտրած բնակության վայրի՝ զբաղվածության տարածքային կենտրոնը և աշխատանքի տեղավորման ծառայություններ մատուցող ոչ պետական կազմակերպությունները՝ տվյալներ հայտնելով նրա սեռի, տարիքի, աշխատունակության, կրթության և մասնագիտության վերաբերյալ (սույն կարգին կից Ձև 14),

3) դատապարտյալին նախկին բնակության վայրում հաշվառելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելը, որը ներառում է՝ պայմանական վաղաժամկետ ազատման հնարավոր ժամկետից կամ պատիժը լրիվ կրելու ժամկետից երեք ամիս առաջ քրեակատարողական հիմնարկի պետի կողմից Հայաստանի Հանրապետության ոստիկանության համապատասխան բաժին դատապարտյալի բնակության վայրի մասին հարցում ուղարկելը (սույն կարգին կից Ձև 15), մշտական բնակության վայր չունեցող անձանց բնակարանով (կացարանով) ապահովելուն աջակցելը: Իրականացված աշխատանքների վերաբերյալ գրանցում է կատարվում «Ազատվող դատապարտյալների վերաբերյալ ոստիկանության բաժիններ, զբաղվածության տարածքային կենտրոններ ուղարկվող հարցումների և հաղորդումների հաշվառման» մատյանում (սույն կարգին կից Ձև 16),

4) միայնակ, սոցիալապես անապահով, տարեց (կենսաթոշակային տարիքի հասած) կամ առաջին կամ երկրորդ կարգի հաշմանդամ դատապարտյալին, իր խնդրանքով հաշմանդամների կամ ծեռերի համար նախատեսված հաստատություններ ուղարկելու ներկայացնելու վերաբերյալ քրեակատարողական հիմնարկի բաժնի կամ խմբի ղեկավարի կողմից քրեակատարողական հիմնարկի պետին վերադասության կարգով միջնորդություն ներկայացնելը,

5) պատժից ազատվող և առողջական վիճակի պատճառով խնամքի կարիք ունեցող, հղի, մինչև երեք տարեկան երեխա ունեցող անձի, ինչպես նաև անչափահասի ազգականներին կամ այլ անձանց նրա ազատվելու մասին նախօրոք հայտնելու անհրաժեշտության և նպատակահարմարության վերաբերյալ քրեակատարողական հիմնարկի բաժնի կամ խմբի ղեկավարի կողմից քրեակատարողական հիմնարկի պետին վերադասության կարգով միջնորդություն ներկայացնելը և սահմանված դեպքում դատապարտյալին բնակության վայր ուղեկցորդելը: Անհրաժեշտության դեպքում անչափահաս դատապարտյալի ազատվելու մասին իրազեկվում են նրա բնակության վայրի հոգաբարձության և խնամակալության մարմինները, անչափահասների գործերով հանձնաժողովները,

6) պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու, ինչպես նաև ներում շնորհելու նպատակահարմարությունը որոշելու համար դատապարտյալի վերաբերյալ քրեակատարողական հիմնարկի պետին համապատասխան բնութագրեր ներկայացնելը, պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ներկայացնելու գործընթացը սահմանված կարգով կազմակերպելուն մասնակցելը,

7) պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատվող, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ենթակա կամ պատիժն ամբողջությամբ կրած դատապարտյալին հոգեբանական աջակցություն ցուցաբերելը,

8) պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատված, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինված, պատիժն ամբողջությամբ կրած դատապարտյալին հանձնվող փաստաթղթերը օրենքով սահմանված կարգով կազմելու և ժամանակին դատապարտյալին հանձնելու ուղղությամբ իրականացվող աշխատանքներին մասնակցելը:

## Գ Լ ՈՒ Խ 6

### ***ՍՈՑԻԱԼԱԿԱՆ, ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԸՍՏ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ***

44. Ուղղիչ հիմնարկներում սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներն ըստ քրեակատարողական հիմնարկի մեկուսացվածության աստիճանի կազմակերպվում են ներքոհիշյալ առանձնահատկություններով`

1) բաց ուղղիչ հիմնարկներում սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքները կազմակերպվում են անհատական կարգով` որպես կանոն ըստ անհրաժեշտության, ինչպես նաև դատապարտյալի դիմումի հիման վրա,

2) կիսաբաց ուղղիչ հիմնարկներում կազմավորվում են դատապարտյալների խմբեր (այսուհետ` խմբեր): Հիմնարկում խմբերի թիվը սահմանվում է` ելնելով սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների արդյունավետ կազմակերպման նպատակահարմարությունից: Դատապարտյալին ըստ խմբերի

տեղաբաշխելը կատարվում է՝ հաշվի առնելով նրա սոցիալական և հոգեբանական առանձնահատկությունները, առողջական վիճակը, քրեածին վարքի առանձնահատկությունները, հոգեբանական համատեղելիությունը և արժեքային կողմնորոշումները: Դատապարտյալներն ըստ խմբերի տեղաբաշխվում են քրեակատարողական հիմնարկի պետի հրամանով՝ բաժնի կողմից տրված եզրակացությունների հիման վրա: Հրամանի քաղվածքը կցվում է դատապարտյալի անձնական գործին: Տնտեսական սպասարկման աշխատանքներում ներգրավված դատապարտյալները տեղաբաշխվում են նույն խմբում: Խմբի ղեկավար է նշանակվում բաժնի մասնագետներից որևէ մեկը (այսուհետ՝ խմբի ղեկավար), որը խմբում ընդգրկված դատապարտյալների հետ տարվող սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների հիմնական կազմակերպիչը և իրականացնողն է: Խմբերի ղեկավարների գործունեությունը համակարգում և վերահսկում է քրեակատարողական հիմնարկի բաժնի կամ խմբի ղեկավարը կամ նրա պարտականությունները կատարող անձը: Որպես կանոն, դատապարտյալը խմբում ընդգրկվում է պատժի կրման ողջ ժամանակահատվածի համար: Խմբից խումբ տեղափոխում կարող է իրականացվել քրեակատարողական հիմնարկի բաժնի կամ խմբի ղեկավարի կողմից քրեակատարողական հիմնարկի պետին ներկայացված միջնորդության հիման վրա: Պատժախուց տեղափոխված դատապարտյալը խմբի կազմից չի հանվում,

3) կիսափակ և փակ ուղղիչ հիմնարկներում խցերը բաշխվում են բաժնի մասնագետների միջև՝ յուրաքանչյուր աշխատող քրեակատարողական հիմնարկի պետի հրամանով նշանակվում է համապատասխան խցերի (3-10 խուց) պատասխանատու: Կիսափակ և փակ ուղղիչ հիմնարկներում խմբեր չեն ստեղծվում,

4) բուժական ուղղիչ հիմնարկում սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներն իրականացվում են ըստ անհրաժեշտության, ինչպես նաև դատապարտյալի դիմումի հիման վրա: Այդ աշխատանքներն ուղղված են դատապարտյալի բուժման գործընթացին նպաստող պայմանների ստեղծմանը: Այդ նպատակով բուժական ուղղիչ հիմնարկներում դատապարտյալների բուժումը, այդ թվում՝ թմրամոլության և ալկոհոլամոլության բուժումը կարող է իրականացվել ոչ միայն բուժական մեթոդներով, այլ նաև հոգեթերապևտիկ և սոցիալական մեթոդներով:

Դատապարտյալի՝ պատիժը կատարելու համար քրեակատարողական հիմնարկի տեսակը փոխելուց հետո նրա հետ իրականացվող աշխատանքները հիմնվում են նախորդ քրեակատարողական հիմնարկում կատարած աշխատանքների արդյունքների վրա:

## Գ Լ ՈՒ Խ 7

**ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼՆԵՐԻ ԱԽՏՈՐՈՇՈՒՄԸ, ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄԸ  
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ, ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ  
ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼԻՍ**

45. Սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքները սկսվում են դատապարտյալի ախտորոշումից: Դատապարտյալի ախտորոշման նպատակն է՝ բացահայտել վերջինիս բացասական վարքի դրդապատճառները, քրեածին վարքի դրդող գործոնները, ռիսկայնության և բռնության հակումների կամ այլ առանձնահատուկ հատկանիշների առկայությունը, սոցիալական պահանջմունքները և անհատական հոգեբանական առանձնահատկությունները: Ախտորոշման ժամանակ հաշվի են առնվում նաև քրեակատարողական հիմնարկի այլ ստորաբաժանումների աշխատողների մասնագիտական եզրակացությունները: Ախտորոշման արդյունքում սահմանվում են չափանիշներ, որոնց հիման վրա որոշվում է դատապարտյալի՝ բռնության հակումների և ռիսկայնության աստիճանը, հոգեկան հիվանդության նախանշանները, ինքնասպանության և ինքնավնասման հակումները, թմրամոլության և այլ կախվածությունների առկայությունը: Այն դեպքերում, երբ դատապարտյալի մոտ առկա է սահմանված ցուցանիշից բարձր ցուցանիշ, նրա հետ իրականացվում են համապատասխան աշխատանքներ: Ախտորոշման հիման վրա կալանավորվածի կամ դատապարտյալի անհատական քարտում քրեակատարողական հիմնարկի բաժնի կամ խմբի մասնագետը կազմում է դատապարտյալի ուղղման գործընթացի ծրագիր: Ուղղման գործընթացի ծրագիրը պատժի կրման ժամանակահատվածում դատապարտյալի հետ անհրաժեշտ և նպատակահարմար աշխատանքի ձևերի և մեթոդների ընտրությունն է, դրանց կատարման համար անհրաժեշտ միջոցներ ընտրելը և նպատակային կիրառելն է:

46. Պատժի կրման ընթացքում պարբերաբար կատարվում է դատապարտյալի գնահատում: Դատապարտյալի գնահատումը սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ իրականացնելու ընթացքում տարբեր մասնագետների կողմից կազմակերպվող խմբային աշխատանք է: Գնահատումները կատարվում են դատապարտյալի քրեակատարողական հիմնարկ ընդունումից հետո յուրաքանչյուր եռամսյակ՝ մեկ տարվա համար նախատեսված «Վարքի գնահատման թերթիկում» (սույն կարգին կից Ձև 17), որը լրացվելուց հետո հաստատվում է քրեակատարողական հիմնարկի պետի կողմից և կցվում դատապարտյալի անձնական գործին: Գնահատումները ներառում են տեղեկություններ դատապարտյալի հետ կատարված աշխատանքների ընթացքի, դատապարտյալի վարքի փոփոխության մասին, մասնավորապես՝

1) դատապարտյալի կապն ընտանիքի և արտաքին աշխարհի հետ գնահատվում է հետևյալ չափանիշներով՝

ա. բարձր, եթե օգտվում է օրենքով սահմանված տեսակցության իրավունքից, նրա նկատմամբ կիրառվել է խրախուսանքի միջոց լրացուցիչ կարճատև կամ երկարատև տեսակցության տրամադրման միջոցով, հաճախ ունենում է հեռախոսագրույց,

բ. միջին, եթե պարբերաբար օգտվում է կարճատև տեսակցության իրավունքից, երբեմն ունենում է հեռախոսագրույց,

գ. ցածր, երբ ընտանիքի հետ կապեր չունի, չի օգտվում կարճատև և երկարատև տեսակցությունների իրավունքից և հեռախոսակապից,

2) դատապարտյալի ռիսկայնության աստիճանը գնահատվում է հետևյալ չափանիշներով՝

ա. բարձր, եթե հաշվառման է վերցված որպես ռիսկային դատապարտյալ,

բ. միջին, երբ առկա է ստորև ներկայացված հատկանիշներից առնվազն երկուսը.

- ունի ագրեսիվության միջին ցուցանիշ,

- պատժի կրման վերջին մեկ տարվա ընթացքում չի կատարել ուրիշին կամ իրեն վնասելու փորձ,

- իր նախաձեռնությամբ մասնակցում է սոցիալական, հոգեբանական և իրավական մասնագիտական և այլ աշխատանքներին,

- պատժի կրման վերջին մեկ տարվա ընթացքում թույլ չի տվել չարամիտ խախտում,

գ. ցածր, երբ առկա է ստորև ներկայացված հատկանիշներից առնվազն երեքը.

- ունի ագրեսիվության ցածր ցուցանիշ,

- խրախուսվել է,

- իր նախաձեռնությամբ մասնակցում է սոցիալական, հոգեբանական և իրավական մասնագիտական և այլ աշխատանքներին,

- քրեակատարողական հիմնարկում գտնվելու ընթացքում չի կատարել ուրիշին կամ իրեն վնասելու փորձ,

- քրեակատարողական հիմնարկում գտնվելու ընթացքում թույլ չի տվել չարամիտ խախտում,

- պատժից ազատվելուց հետո ցանկություն ունի աշխատանք գտնելու,

3) ուղղման գործընթացի ծրագրի կատարման արդյունքները գնահատվում են հետևյալ չափանիշներով՝

ա. բարձր, եթե ուղղման գործընթացի ծրագրով նախատեսված գործողությունները ամբողջությամբ կատարվել են,

գ. միջին, եթե ուղղման գործընթացի ծրագրով նախատեսված միջոցառումները և գործողությունները հիմնականում իրականացվել են, սակայն կան որոշ բացթողումներ,

դ. ցածր, եթե ուղղման գործընթացի ծրագրով նախատեսված միջոցառումները և գործողությունները չեն իրականացվել՝ դատապարտյալի կողմից կամք, հետևողականություն և համապատասխան վարքագիծ չցուցաբերելու պատճառով,

4) դատապարտյալի կարգապահությունը գնահատվում է հետևյալ չափանիշներով՝

ա. բարձր, երբ պատիժը կրելու ընթացքում կարգապահական տույժի չի ենթարկվել և նրա նկատմամբ կիրառվել է խրախուսանքի միջոց,

բ. միջին, երբ ենթարկվել է կարգապահական տույժի, սակայն տույժը կրելուց հետո նվազագույնը մեկ տարվա ընթացքում նոր կարգապահական խախտումներ թույլ չի տվել,

գ. ցածր, երբ գնահատման ժամանակահատվածում ենթարկվել է կարգապահական տույժի, կամ ունի գործող տույժ,

5) դատապարտյալի մասնակցությունը կրթական, մշակութային և այլ ծրագրերին և ներգրավվածությունը աշխատանքին գնահատվում է հետևյալ չափանիշներով՝

ա. բարձր, երբ ակտիվորեն մասնակցել է քրեակատարողական հիմնարկում իրականացվող կրթական ծրագրերին, մշակութային, լուսավորչական և մարզական միջոցառումներին, կամ ներգրավված է որևէ վարձատրվող կամ հիմնարկում իրականացվող բարեկարգման աշխատանքներին, նախաձեռնություն է ցուցաբերել լուսավորչական միջոցառումների կազմակերպման գործում,

բ. միջին, երբ հազվադեպ է մասնակցել քրեակատարողական հիմնարկում իրականացվող միջոցառումներին և վարձատրվող կամ հիմնարկում իրականացվող բարեկարգման աշխատանքներին,

գ. ցածր, երբ հրաժարվում է ընդգրկվել քրեակատարողական հիմնարկում իրականացվող միջոցառումներին և աշխատանքներին:

47. Դատապարտյալի ուղղման աստիճանը գնահատման արդյունքների հիման վրա որոշվում է.

ա. դրական, երբ պատժի կրման ընթացքում դատապարտյալի կարգապահությունը և ուղղման գործընթացի ծրագրի կատարման արդյունքները գնահատվել են բարձր կամ միջին, իսկ ռիսկայնության աստիճանը՝ ցածր,

բ. բացասական, երբ դատապարտյալի կարգապահության կամ ուղղման գործընթացի ծրագրի կատարման արդյունքները գնահատվել են ցածր, իսկ ռիսկայնության աստիճանը՝ բարձր կամ միջին:

48. Դատապարտյալի պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու, ներում շնորհելու համար միջնորդություն ներկայացնելու, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում հրավիրվում է բաժնի նիստ: Նիստի ընթացքում խմբի ղեկավարը ներկայացնում է տեղեկատվություն պատժի կրման ընթացքում դատապարտյալի վարքագծի, այդ ընթացքում նրա հետ իրականացված աշխատանքների և արդյունքների վերաբերյալ: Քննարկման արդյունքների հիման վրա՝ հաշվի առնելով բաժնի համապատասխան որակավորում ունեցող մասնագետների կարծիքները և դատապարտյալի գնահատման արդյունքները, կազմվում է բնութագիր (սույն կարգին կից Ձև 18), որը բաժնի պետը ներկայացնում է քրեակատարողական հիմնարկի պետի տեղակալին, վերջինս էլ՝ քրեակատարողական հիմնարկի պետի հաստատմանը:

49. Բնութագիրը պետք է ներառի դատապարտյալի՝ պատժի կրման ժամանակահատվածում կատարված գնահատումների արդյունքները, ինչպես նաև տեղեկատվություն հետևյալի մասին՝

1) դատապարտյալի վերաբերյալ ընդհանուր տվյալներ՝ անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան թիվը, վայրը, ազգությունը, քաղաքացիությունը, բնակության վայրը, ընտանեկան կարգավիճակը,

2) դատավճիռը կայացնող դատարանը, Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածը և հոդվածի համապատասխան մասը (կամ հոդվածները և մասերը), պատժաչափը, ազատազրկման սկզբի և ավարտի ամսաթվերը, տվյալ քրեակատարողական հիմնարկում գտնվելու ժամկետը,

տեղեկություններ դատավճռի բողոքարկման և վերադաս դատական ասյանների կողմից կայացված դատական ակտերի մասին,

3) տեղեկություններ նախկինում դատված լինելու փաստի, պատժից պայմանական վաղաժամկետ ազատված լինելու, ներման կամ համաներման ակտի կիրառմամբ պատժից ազատվելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ,

4) պատժի կրման ընթացքում նրա նկատմամբ տույժի և խրախուսանքի միջոցների կիրառման վերաբերյալ,

5) նրա կրթության, մասնագիտության առկայության,

6) կրթական մշակութային և այլ ծրագրերին և միջոցառումներին մասնակցության, վարձատրվող կամ չվարձատրվող աշխատանքներին ներգրավվածության,

7) մշակութային, լուսավորչական և մարզական ինքնագործ միավորումների աշխատանքներին մասնակցության,

8) դատապարտյալի կողմից տուժողին պատճառած վնասի հատուցման,

9) ընտանիքի հետ կապի և փոխհարաբերությունների, նրա խնամքի տակ գտնվող անձանց առկայության,

10) առողջական վիճակի, աշխատունակության, հաշմանդամության,

11) դատապարտյալի վարքի, բնավորության, խառնվածքի, հոգեբանական առանձնահատկությունների և դրանց դինամիկայի վերաբերյալ հոգեբանական եզրակացության,

12) պատժի կրումից ազատվելուց հետո դատապարտյալի սոցիալական ապահովության, բնակարանային, աշխատանքային, նյութակենցաղային պայմանների, կենսական ծրագրերի վերաբերյալ սոցիալական եզրակացության,

13) դատապարտյալի ընթացիկ գնահատումների արդյունքների և ռիսկայնության ըստ գնահատման թերթիկի եզրակացության,

14) դատապարտյալի ռիսկայնության աստիճանի և վերջինիս կողմից ուղղվելու համար նշանակված պատժի մնացած մասը կրելու կարիք ունենալու կամ չունենալու,

15) այլ տեղեկություններ, որոնք կարող են հաշվի առնվել բնութագրման ժամանակ:

Բնութագիրը կարող է ներառել նաև քրեակատարողական հիմնարկի այլ ստորաբաժանումների ծառայողների կարծիքները:

Դատապարտյալը բնութագրվում է դրական, երբ ընթացիկ գնահատումների արդյունքները բարձր են, ռիսկայնությունը՝ ցածր կամ միջին, բացասական, երբ ընթացիկ գնահատումների արդյունքները ցածր են կամ միջին, ռիսկայնությունը՝ բարձր:

## Գ Լ ՈՒ Խ 8

**ՍՈՑԻԱԼԱԿԱՆ, ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ  
ԻՐԱԿԱՆԱՅՈՒՄԸ ՊԱՏԺԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԵՏ ՄԻԱՑՎԱԾ ԲԺՇԿԱԿԱՆ ԲՆՈՒՑԹԻ  
ՀԱՐԿԱԴՐԱՆՔԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԿԻՐԱՌԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ**

50. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված դեպքերում պատժի կատարման հետ միացված բժշկական բնույթի հարկադրանքի համապատասխան միջոցները քրեակատարողական հիմնարկում կիրառելու ընթացքում սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքները ներառում են՝

1) ավյուրաբանությունից, թմրամոլությունից կամ թունամոլությունից դատապարտյալներին բուժելու ուղղությամբ հոգեբանական և սոցիալական ծրագրեր մշակելը և իրականացնելը: Նշված ծրագրերն ուղղված են դատապարտյալի կամային հատկանիշների ակտիվացմանը, կիրառվող բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների ազդեցության և արդյունավետության բարձրացմանը, կախվածություն ունենալու հետևանքով կորսված սոցիալական հմտությունների վերականգնմանը և թերապևտիկ միջոցների կիրառմանը,

2) դատապարտյալի նկատմամբ պատժի կատարման հետ միացված բժշկական բնույթի հարկադրանքի միջոցի կիրառումը փոփոխելու կամ դադարեցնելու նպատակով միջնորդություն ներկայացնելու հարցը քննարկելիս վերադատության կարգով քրեակատարողական հիմնարկի պետին սոցիալ-հոգեբանական եզրակացություն ներկայացնելը,

3) պատժի կրումից ազատվող դատապարտյալի, ինչպես նաև նրա մերձավոր ազգականների հետ պատժի կրման ընթացքում իրականացված աշխատանքների արդյունքների պահպանմանն ու շարունակմանն ուղղված տեղեկատվական և խորհրդատվական աշխատանքներ իրականացնելը: Նշված աշխատանքներն իրականացվում են բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառող համապատասխան բժշկի հետ խորհրդակցությամբ:

## Գ Լ ՈՒ Խ 9

### ՍՈՑԻԱԼԱԿԱՆ, ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՊԱՏԻՃԸ ՊԱՅՄԱՆԱԿԱՆՈՐԵՆ ՉԿԻՐԱՌԵԼԻՍ ԵՎ ՊԱՏԻՃԸ ԿՐԵԼՈՒՑ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԱԶԱՏԵԼԻՍ՝ ԴՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՓՈՐՁԱՇՐՋԱՆՆ ԱՆՑՆԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ

51. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված դեպքերում պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանի կողմից սահմանված փորձաշրջանն անցնելու, պատժից պայմանական վաղաժամկետ ազատվելու դեպքերում, սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների իրականացումը պարտադիր է, եթե այդպիսիք նշանակվել են դատարանի կողմից:

52. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված դեպքերում պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանի կողմից սահմանված փորձաշրջանն անցնելու, պատժից պայմանական վաղաժամկետ ազատվելու դեպքերում դատարանի կողմից նշանակված սոցիալական,



հոգեբանական և իրավական աշխատանքներն իրականացվում են՝ ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների կատարման ստորաբաժանումների համապատասխան մասնագետների կողմից:

53. Սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքները ներառում են՝

1) դատապարտյալի անձն ուսումնասիրելը, նրա հետ սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների անհատական ծրագիր կազմելը՝ սոցիալական, հոգեբանական թերապիայի, սոցիալական վերահսկողության, կրթական և աշխատանքային գործունեության, ինչպես նաև վարքագծի դրական փոփոխությանը և ուղղմանը նպաստող ներգործության այլ միջոցների և ծրագրերի ընդգրկմամբ նշված գործունեությունների կատարումը կազմակերպելը և դրանց կատարման նկատմամբ հսկողություն իրականացնելը,

2) դատապարտյալին իր իրավունքների և պարտականությունների վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելը՝ այդ մասին տեղեկանքը կցելով նրա անձնական գործին,

3) դատապարտյալի ուղղման նպատակով դատապարտյալին և նրա ընտանիքին սոցիալական, հոգեբանական և այլ աջակցություն ցույց տալը, սոցիալական ծրագրերի մեջ ընդգրկելը, ինչպես նաև՝ օրենքով նախատեսված սոցիալական ապահովության իրավունքների պաշտպանությանն ապահովմանն աջակցելը,

4) սոցիալ-հոգեբանական հատուկ ծրագրեր մշակելը՝ ուղղված ակոհաբանությունից, թմրամոլությունից և թունամոլությունից դատապարտյալների բուժմանը,

5) դատապարտյալի կողմից անհատական ծրագրով նախատեսված գործողությունների կատարման աստիճանը հաշվի է առնվում պատիժը պայմանականորեն չկիրառելը, պայմանական վաղաժամկետ ազատումը վերացնելու նպատակով միջնորդություն ներկայացնելու հարցը քննարկելիս:

## Գ Լ ՈՒ Խ 10

### *ՍՈՑԻԱԼԱԿԱՆ, ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՄ ԱՐԳԵԼՎԱԾ ՄԵԹՈԴՆԵՐՆ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԵՐԸ*

54. Սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներում արգելվում է՝

1) կալանավորվածների և դատապարտյալների անձնական կյանքին վերաբերող տեղեկատվություն տարածելը, բացառությամբ այն դեպքերի, երբ տեղեկատվությունը պարունակում է տվյալներ հաստատապես նախապատրաստվող հանցագործության մասին,

2) կալանավորվածի և դատապարտյալի հետ փոխհարաբերություններում մասնագիտական հմտությունների օգտագործումն անձնական նպատակներից և շահերից ելնելով,

3) որևէ խտրականության կիրառումը,

4) կալանավորվածների և դատապարտյալների հետ աշխատանքում վերջիններիս հուսադրելու նպատակով ապատեղեկատվություն տրամադրելը,

5) մասնագիտական այնպիսի մեթոդների կիրառումը, որոնք բացասական ազդեցություն կունենան կալանավորվածների և դատապարտյալների հոգեկան առողջության վրա,

6) կալանավորվածների և դատապարտյալների նկատմամբ հիպնոսի մեթոդների կիրառումը,

7) կալանավորվածներին և դատապարտյալներին բժշկական, գիտական կամ այլ փորձերի ենթարկելը՝ անկախ նրանց համաձայնությունից,

8) կալանավորվածների և դատապարտյալների նկատմամբ հոգեբանական բռնության կիրառումը և խոշտանգումները:

## Գ Լ ՈՒ Խ 11

### ***ՍՈՑԻԱԼԱԿԱՆ, ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼԻՆ ԿԱՐՃԱՏԵՎ ՄԵԿՆՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼԻՄ***

55. Կարճաժամկետ մեկնումը դատապարտյալի ուղղման գործընթացին նպաստող ներգործության կարևոր միջոց է, քրեակատարողական հիմնարկի սահմաններից դուրս անձնական, կենսական, բուժական և այլ խնդիրները տնօրինելու հնարավորությունն է, որը կիրառվում է հիմնավոր դեպքերում օրենսդրությամբ սահմանված կարգով: Կարճաժամկետ մեկնում կարող է տրամադրվել սոցիալական վերականգնման նպատակով և անձնական բացառիկ հանգամանքների դեպքում:

56. Սոցիալական վերականգնումը արտաքին աշխարհի հետ շփումների և կապի պահպանման և բարելավման միջոցով դատապարտյալի անձնային, սոցիալ-հոգեբանական և հասարակական կարգավիճակի շարունակական հաստատումն է կամ վերահաստատումը:

57. Սոցիալական վերականգնման բաղադրատարրերն են՝

1) հասարակական, դրական կապերի, շփումների պահպանումը և վերականգնումը,

2) սոցիալ-կենցաղային, այդ թվում՝ ընտանեկան խնդիրների կարգավորումը,

3) ամուսնաընտանեկան կապերի ստեղծումը, վերականգնումը և կարգավորումը,

4) ֆիզիկական առողջության պահպանումը և բարելավումը, հաղորդակցման հմտություններ, ինչպես նաև մասնագիտական և աշխատանքային ունակությունների վերականգնումը,

5) հոգևոր կրոնական արժեքների պահպանումը և վերականգնումը,

6) քաղաքացիաիրավական գործարքներին մասնակցությունը,

7) պատժից ազատվելուց հետո աշխատանքի և բնակարանային հարցերի նախապատրաստումը կամ կազմակերպումը:

58. Դատապարտյալին սոցիալական վերականգնման նպատակով կարճաժամկետ մեկնում տրամադրելու վերաբերյալ հարցը քննարկելիս հաշվի է առնվում՝

- 1) դատապարտյալի անձը,
- 2) նրա վարքագիծը,
- 3) կատարած հանցագործության ծանրության աստիճանը,
- 4) պատիժը կրելու ժամկետը:

59. Կարճատեև մեկնման վերաբերյալ որոշում կայացնելիս հաշվի է առնվում՝

- 1) անձի դրական բնութագիրը,
- 2) ինքնավնասման, փախուստի կամ ռիսկային այլ հակումների բացակայությունը,
- 3) ռիսկայնության ցածր աստիճանը,
- 4) բնակության վայրի առկայությունը,
- 5) վերջին 1 տարվա ընթացքում կարգապահական խախտումների բացակայությունը,

6) տուժողին պատճառած վնասի հատուցումը (թեկուզ մասնակի),

7) քրեակատարողական հիմնարկում դատապարտյալի սոցիալ-հոգեբանական հարմարման վիճակը:

60. Դատապարտյալին սոցիալական վերականգնման նպատակով կարճաժամկետ մեկնում տրամադրելու հարցը նպատակահարմար է քննարկել կատարված հանցագործության և պատժաչափի կրման ժամկետի հետևյալ հարաբերակցության դեպքում՝

- 1) դիտավորությամբ կատարված ոչ մեծ ծանրության հանցագործության և ոչ ավելի,
- 2) քան 2 տարի պատժաչափի դեպքում՝ պատժի սկզբից առնվազն 6 ամիս անց,
- 3) դիտավորությամբ կատարված միջին ծանրության հանցագործության և ոչ ավելի, քան 5 տարի պատժաչափի դեպքում՝ պատժի սկզբից առնվազն 1 տարի անց,
- 4) դիտավորությամբ կատարված ծանր հանցագործության 5 տարի և ավելի պատժաչափի դեպքում՝ պատժի սկզբից առնվազն 2 տարի անց:

61. Դատապարտյալին կարճաժամկետ մեկնում տրամադրելու նպատակահարմարության հարցը քննարկվում է հետևյալ փաստաթղթերի առկայության դեպքում՝

- 1) դատապարտյալի գրավոր դիմումը,
- 2) դատապարտյալի անձնագիրը,
- 3) անձնական բացառիկ հանգամանքները հաստատող փաստաթղթեր,
- 4) դատապարտյալի բնութագիրը:

62. Հիմնարկի կալանավորված անձանց և դատապարտյալների հաշվառման, անվտանգության ապահովման, սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների բաժինները դատապարտյալին կարճաժամկետ մեկնում տրամադրելու նպատակահարմարության վերաբերյալ ներկայացնում են կարծիք՝ դիմումի վրա համապատասխան նշում կատարելով: Առողջությանն առնչվող խնդիրների կարգավորման կապակցությամբ մեկնման որոշում կայացնելիս

եզրակացություն է ներկայացնում նաև հիմնարկի բուժսպասարկման բաժինը (խումբը):

63. Դատապարտյալին կարճաժամկետ մեկնմանն առնչվող բոլոր փաստաթղթերը կցվում են նրա անձնական գործին:

64. Դատապարտյալին կարճաժամկետ մեկնում տրամադրելու վերաբերյալ որոշում կայացնելիս դրա վերաբերյալ գրանցում է կատարվում այդ նպատակով հիմնարկում բացված մատյանում (սույն կարգին կից Ձև 19), որը վարվում է պատասխանատու հերթապահի կողմից:

65. Դատապարտյալին կարճաժամկետ մեկնում տրամադրելու վերաբերյալ դրական որոշում կայացնելու դեպքում նույն օրը այդ մասին գրավոր տեղեկացվում է ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչություն՝ ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը.

- 1) հիմնարկի պետի որոշման պատճենը,
- 2) դատապարտյալի բնութագրի պատճենը,
- 3) տեղեկանք դատապարտյալի անձնական գործից,
- 4) անձնագրի պատճենը:

#### **ԳԼՈՒԽ 12**

### **ՍՈՑԻԱԼԱԿԱՆ, ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԵՎ ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼՆԵՐԻՆ ՌԻՍԿԱՅԻՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԵՐՑՆԵԼԻՍ ԵՎ ՀԱՇՎԱՌՈՒՄԻՑ ՀԱՆԵԼԻՍ**

*(12-րդ գլուխը լրաց. 01.09.08 N 120-Ն)*

66. Ռիսկային են համարվում այն կալանավորված անձինք և դատապարտյալները, որոնք հիմնարկի ներքին կանոնակարգը խախտելու, իրենց կամ այլ անձանց կյանքին, առողջությանը վնաս պատճառելու վարքագծային և անձնական հակում ունեն, ինչպես նաև այն դատապարտյալները, որոնք ունեն հանցածին դիրքորոշումներ և պատիժը կրելուց հետո կարող են վտանգավոր լինել հանրության համար:

67. Կալանավորված անձը և դատապարտյալը ռիսկային հաշվառման է վերցվում և հաշվառումից հանվում է հիմնարկի պետի որոշմամբ՝ անվտանգության ապահովման, սոցիալական, հոգեբանական և իրավական, բժշկական սպասարկման բաժինների կողմից տրված եզրակացությունների հիման վրա: Ռիսկային հաշվառման վերցնելու և հաշվառումից հանելու վերաբերյալ որոշումները կցվում են կալանավորված անձի կամ դատապարտյալի անձնական գործին:

68. Կալանավորված անձինք և դատապարտյալները հաշվառման են վերցվում որպես ռիսկային, եթե նրանց մոտ առկա են փախուստի, ինքնավնասման, ալկոհոլի, թմրամիջոցների, ագրեսիվության և կոնֆլիկտայնության, ինչպես նաև հանցածին դիրքորոշումների հակումներից մեկը.

1) Կալանավորված անձին և դատապարտյալին որպես փախուստի հակում ունեցող հաշվառելու հիմք են հանդիսանում՝

ա. նախկինում կատարած փախուստի փորձի կամ փախուստի փաստի վերաբերյալ գրառումները անձնական գործում,

բ. անվտանգության ապահովման բաժնի կողմից տրված եզրակացությունը:

2) Որպես ինքնավնասման հակում ունեցող հաշվառելու հիմք են հանդիսանում՝

ա. մինչև 1 տարվա ընթացքում երկու և ավելի ինքնավնասման փորձի կամ փաստի վերաբերյալ գրառումները անձնական գործում,

բ. հոգեբանական եզրակացությունը:

3) Որպես ակոհոլի, թմրանյութերի նկատմամբ հակում ունեցող հաշվառելու հիմք են հանդիսանում՝

ա. դատավճռով տրված հարկադիր բուժման որոշումը,

բ. բժշկական եզրակացությունը,

գ. մեկ տարվա ընթացքում երկու և ավելի անգամ ոգելից խմիչք պատրաստելու, օգտագործելու համար կարգապահական պատասխանատվության ենթարկվելը:

4) Որպես ագրեսիվության, կոնֆլիկտայնության հակում ունեցող հաշվառելու հիմք են հանդիսանում՝

ա. մինչև 6 ամսվա ընթացքում երկու և ավելի կարգապահական խախտումների առկայությունը,

բ. հոգեախտորոշմամբ ագրեսիվության բարձր աստիճան ցուցանիշը,

գ. անձնական գործում առկա առանձին դաժանությամբ կամ բռնությամբ կատարված հանցագործության մասին տեղեկատվությունը:

5) Որպես հանցածին դիրքորոշումների հակում ունեցող հաշվառելու հիմք են հանդիսանում՝

ա. նախկինում դիտավորությամբ կատարված ծանր և առանձնապես ծանր երկու և ավելի հանցագործությունները,

բ. հիմնարկում մոլեխաղերի դրդելու, կազմակերպելու գործողությունները,

գ. անվտանգության ապահովման բաժնի կողմից տրված տեղեկատվությունը:

69. Կալանավորված անձը և դատապարտյալը որպես ռիսկային հակում ունեցող հաշվառվում է մատչանում (սույն կարգին կից ձև 9), կալանավորված անձի և դատապարտյալի անհատական քարտում սահմանվում և իրականացվում են ռիսկայնության նվազեցման աշխատանքները ըստ հակումի տեսակի:

70. Փախուստի հակում ունեցող կալանավորված անձինք և դատապարտյալները հաշվառումից կարող են հանվել հաշվառվելուց առնվազն 2 տարի հետո, եթե կատարված աշխատանքների արդյունքում նրանց ռիսկայնության աստիճանը նվազել և առկա է վարքագծի դրական փոփոխություն:

71. Ինքնավնասման հակում ունեցող կալանավորված անձինք և դատապարտյալները հաշվառումից կարող են հանվել, եթե նրանց նկատմամբ կատարված աշխատանքները տվել են դրական արդյունք, և պատժի կրման 1 տարվա ընթացքում նրանց կողմից չի կատարվել ինքնավնասում կամ ինքնավնասման փորձ:

72. Ալկոհոլի, թմրամիջոցների օգտագործման հակված կալանավորված անձինք և դատապարտյալները հաշվառումից կարող են հանվել համապատասխան բուժում ստանալուց հետո 1 տարվա ընթացքում, ոգելից խմիչք պատրաստելու, օգտագործելու համար կարգապահական պատասխանատվության չենթարկվելու դեպքում:

73. Ագրեսիվության, կոնֆլիկտայնության հակված կալանավորված անձինք և դատապարտյալները հաշվառումից կարող են հանվել, եթե 1 տարվա ընթացքում կարգապահական խախտումներ թույլ չեն տվել և ագրեսիվության աստիճանը նվազել է:

74. Հանցածին դիրքորոշում ունեցող կալանավորված անձինք և դատապարտյալները հաշվառումից կարող են հանվել, եթե կարգապահությունը և ուղղման գործընթացի ծրագրի կատարման արդյունքները գնահատվել են բարձր, իսկ ռիսկայնության աստիճանը՝ ցածր:

(12-րդ գլուխը լրաց 01.09.08 N 120-Ն)

Ձև 1

### Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

**ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾԻՆ ԿԱՍ ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼԻՆ ԻՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻՆ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ, ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻՆ ԻՐԱԶԵԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ**

Ես՝ \_\_\_\_\_  
անուն, հայրանուն, ազգանուն

ՀՀ ԱՆ « \_\_\_\_\_ » ՔԿ հիմնարկում ծանոթացա իմ իրավունքներին և պարտականություններին, հիմնարկի ներքին կանոնակարգի պահանջներին, որի համար ստորագրում եմ:

Իրազեկողի ազգանունը,  
պաշտոնը և ստորագրությունը \_\_\_\_\_ « » « » 200 թ.

Կալանավորվածի ազգանունը,  
անունը և ստորագրությունը \_\_\_\_\_ « » « » 200 թ.

**ՀՀ արդարադատության նախարարություն**

Ձև 2





**Կ Ա Լ Ա Ն Ա Վ Ո Ր Վ Ա Ծ Ի Ե Վ Դ Ա Տ Ա Պ Ա Ր Տ Յ Ա Լ Ի  
Ա Ն Հ Ա Տ Ա Կ Ա Ն Ք Ա Ր Տ**

Անուն \_\_\_\_\_  
 Ազգանուն \_\_\_\_\_  
 Հայրանուն \_\_\_\_\_

Քարտը բացված է՝ \_\_\_\_\_  
օրը, ամիսը և տարին

ՀԻՄՆԱՐԿԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԻՄՆԱՐԿԻ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ (ազգանուն, ստորագրություն)	ՔԱՐՏԸ ՎԱՐՈՂ (ԽՄԲԻ ՂԵԿԱՎԱՐ) (ազգանուն, ստորագրություն)	ՀԻՄՆԱՐԿ ՄՈՒՏՔ ԳՈՐԾԵԼՈՒ (ամիս, ամսաթիվ)
	-----	-----	
	-----	-----	
	-----	-----	
	-----	-----	
	-----	-----	
	-----	-----	
	-----	-----	
	-----	-----	
	-----	-----	
	-----	-----	

**Կ Ա Լ Ա Ն Ա Վ Ո Ր Վ Ա Ծ Ա Ն Ձ Ի Վ Ե Ր Ա Բ Ե Ր Յ Ա Լ**

**I. Անհատական տվյալներ**

1. Ազգանունը \_\_\_\_\_
2. Անունը \_\_\_\_\_
3. Հայրանունը \_\_\_\_\_
4. Մականունը \_\_\_\_\_
5. Ծննդյան թիվը \_\_\_\_\_
6. Քաղաքացիությունը \_\_\_\_\_
7. Ազգությունը \_\_\_\_\_
8. Բնակության վայրը, հեռախոսը և հասցեն նախքան կալանավորվելը (եթե չունի՝

նշել)

---

---

---

9. ՀՀ քրեական օրենսգրքի որ հողվածով (հողվածներով) է մեղադրանք առաջադրված

---

---

---

10. Փաստաբան ունի՞, թե ոչ

1. Այո 2. Ոչ

11. Կալանավորման սկիզբը \_\_\_\_\_

12. Նախկին դատվածությունները, որոնց ժամանակ կայացվել է ազատազրկման դատավճիռ

եթե չունի, նշել \_\_\_\_\_

Հ/հ	Տարեթիվ	Հողվածը	Պատժաչափը	Ազատման հիմքերը

**II. Ընտանեկան և սոցիալական պայմաններ**

13. Ընտանեկան դրությունը \_\_\_\_\_

**Մերձավոր ազգականները**

Ազգակցության աստիճանը	Անուն, ազգանուն, հայրանուն	Բնակության հասցեն

14. Կալանավորվելուց հետո անչափահաս երեխաների խնամքը ստանձնել են՝

---



15. Բնակարանով ապահովվածությունը մինչև կալանավորվելը 1. Այո 2. Ոչ

**III. Տեղեկություններ կրթության և աշխատանքի մասին**

16. Կրթությունը

17. Մասնագիտությունը

18. Աշխատանքով ապահովվածությունը մինչև կալանավորվելը 1. Այո 2. Ոչ

Տվյալներ վերջին աշխատանքի վերաբերյալ

աշխատավայրը	երբ է ընդունվել	երբ է ազատվել	պաշտոնը	թողնելու պատճառը

**IV. Առողջական վիճակը**

19. Առողջական խնդիրների առկայությունը 1. Այո 2. Ոչ  
Առկայության դեպքում՝ բժշկի ախտորոշումը

---

---

---

**V. Ամենից շատ անհանգստացնող խնդիրը (ները)**

---

---

---

---

---

---

---

**VI. Նշումներ անհատական ընդունելությունների և կատարված աշխատանքների վերաբերյալ**

---

**VII. Հատուկ նշումներ դատապարտյալի մասին**

Փախուստի հակում 1. Այո 2. Ոչ  
Հարբեցողության հակում 1. Այո 2. Ոչ

Թմրամոլության հակում  
Ինքնավնասման հակում

1. Այո 2. Ոչ  
1. Այո 2. Ոչ

Նորից հանցագործություն կատարելու ռիսկի աստիճանը

1. բարձր 2. միջին 3. ցածր

**VIII. Կենտրոնական մարմնի տեղաբաշխման հանձնաժողովի կողմից նշանակված հիմնարկի տեսակը**

1. փակ 3. կիսաբաց  
2. կիսափակ 4. բաց

**ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**IX մաս**

20. Դատապարտման ամսաթիվը և հոդվածը

---

---

---

---

21. Պատժաչափը \_\_\_\_\_

22. (Լրացուցիչ պատիժը) \_\_\_\_\_

23. Քաղ. հայցի առկայության դեպքում՝ նշել չափը \_\_\_\_\_

24. Դատավճռի բողոքարկումը (ամսաթիվը, ատյանը)

---

---

---

---

25. Պատժի սկիզբը \_\_\_\_\_

26. Պատժի ավարտը \_\_\_\_\_

27. Պայմանական վաղաժամկետ ներկայացման օրը \_\_\_\_\_

28. Ինքը սպասո՞ւմ էր այդպիսի պատժի 1. Այո 2. Ոչ

29. Եթե ոչ, ապա ինչպիսի՞ պատժի էր սպասում

ավելի խիստ պատիժ

ավելի մեղմ պատիժ

30. Ընտանեկան և սոցիալական պայմաններ (փոփոխությունների դեպքում՝ նշել)

---

---

---

---

31. Ազատ ժամանակ ունենալու դեպքում՝ նախընտրելի զբաղմունքը

---

---

---

32. Առողջական խնդիրների փոփոխություններ 1. Այո 2. Ոչ

Եթե այո, ապա բժշկի եզրակացությունը

**X. Դատապարտյալի ուղղման գործընթացի ծրագիր**

Ծրագրի մեջ նշվում են այն գործողությունները և/կամ միջոցառումները, որոնք ծրագրավորվում են իրականացնել դատապարտյալի հետ պատիժը կրելու ընթացքում

ծրագիրը կազմելու օրը \_\_\_\_\_

**Ընտանիքի և համայնքի հետ կապված խնդիրներ**

---

---

---

**Կրթության, մասնագիտացման, աշխատանքի հետ կապված խնդիրներ**

1. Կրթություն

---

---

---

1. Մասնագիտացում

---

---

---

2. Աշխատանք

---

---

---

Քաղ. հայցի մարման ուղղությամբ աշխատանքներ

---

---

---

**Ազատ ժամանակի կազմակերպման հետ կապված նպատակներ**

---

---

---

**Տարբեր հակումների նվազեցման հետ կապված խնդիրներ**

---

---

---

**Առողջության հետ կապված խնդիրներ**

---

---

---

---

**Հոգեբանական վիճակի հետ կապված խնդիրներ**

1. Ադապտացիան

---

---

---

---

2. Վարքագիծը

---

---

---

---

---

3. Միջանձնային փոխհարաբերությունները

---

---

---

---

4. Վերաբերմունքն ապագային

---

---

---

---

---

5. Ազրեւիվություն

---

---

---

---

---

6. Կոնֆլիկտայնություն

---

---

---

Սոցիալական բնույթի խնդիրներ

---

---

---

Այլ խնդիրներ

---

---

---

---

---

Անհատական ընդունելություններ, նշումներ կատարման ընթացքի մասին

---

---

---

---

---

Նշումներ ուղղման գործընթացի ծրագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ

---

---

---

---

---



---



---



---



---



---



---

**XI. ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Հ/հ	Տեսակցության եկած անձը (հարազատության աստիճանը, անուն, ազգանուն, հայրանուն)	Երկարատև տեսակցությունը	Օր, ամիս, տարի	Նշումներ

**XII. Խրախուսանքները**

Խրախուսանքի տեսակը	Ինչի համար է տրվել	Երբ է տրվել	Ում կողմից է ներկայացվել

**XIII. Տույժերը**

Տույժի տեսակը	Ինչի համար է տրվել	Երբ է տրվել	Ում կողմից է ներկայացվել

**XIV. Կարճաժամկետ մեկնումները**



\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_

**5. Տեղեկություններ քաղ. հայցի մարման վերաբերյալ**

\_\_\_\_\_

**9. Պայմանական վաղաժամկետ ազատման ներկայացման գործընթացը (ներկայացվել է) մերժվել է**

- 1. \_\_\_\_\_
- 2. \_\_\_\_\_
- 3. \_\_\_\_\_
- 4. \_\_\_\_\_
- 5. \_\_\_\_\_
- 6. \_\_\_\_\_
- 7. \_\_\_\_\_

**10. Ազատման հիմքը**

\_\_\_\_\_

**11. Դատապարտյալի հետ իրականացված հոգեբանական աշխատանքները**

\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_

**12. Քարտի փակման ամսաթիվը \_\_\_\_\_**

Հիմնարկի պետ՝

Ձև 3

**Մ Ա Տ Յ Ա Ն N \_\_\_\_\_**

**ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾՆԵՐԻ ԵՎ ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ**

Սկսված է \_\_\_\_\_  
Ավարտված է \_\_\_\_\_  
Էջերի քանակ \_\_\_\_\_  
Պահպանման ժամկետը \_\_\_\_\_  
Հիմք \_\_\_\_\_

Հ/հ	Ընդունելության անցկացման ամսաթիվը	Դիմողի անունը, ազգանունը, հայրանունը	Առաջ քաշված խնդրի (հարցի) համառոտ բովանդակություն	Ձեռնարկված միջոցառումների համառոտ	Նշումների համար
-----	-----------------------------------	--------------------------------------	---	-----------------------------------	-----------------























--	--	--	--	--	--	--	--

Ձև 13

ՀՀ ԱՆ « \_\_\_\_\_ » ՔԿՀ պետ

Դատապարտյալ \_\_\_\_\_

\_\_\_\_\_ - ից

**Դ Ի Մ ՈՒ Մ**

Մինչև դատապարտվելը բնակվել եմ \_\_\_\_\_

Աշխատել եմ \_\_\_\_\_

աշխատանքի վայրը, պաշտոնը

Խնդրում եմ ազատվելիս փաստաթղթերս ձևակերպել \_\_\_\_\_

նախկին հասցեում բնակվելուց հրաժարվելու դեպքում նշել պատճառները

Բնակավայրս հասնելու, աշխատանքով ապահովելու և կենցաղային այլ հարցերում

օգնության կարիք \_\_\_\_\_ :

ունեք, չունեք, եթե ունեք, ապա ինչպիսի

Ազատվելուց հետո ցանկություն \_\_\_\_\_ աշխատելու, \_\_\_\_\_ ում

ունեք, չունեք

եթե առկա է՝ նշեք աշխատանքի վայրը,

կատարելու \_\_\_\_\_ աշխատանքը:

նշել նախընտրած զբաղմունքը

Խնդրում եմ իմ վերաբերյալ տեղեկատվությունը \_\_\_\_\_ բնակավայրիս

հայտնել, չհայտնել

զբաղվածության տարածքային կենտրոն:

Դիմող՝ \_\_\_\_\_

Ստորագրություն \_\_\_\_\_

Ձև 14

«Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության

\_\_\_\_\_ կենտրոնի տնօրենին

մարզային, տարածքային

Հայտնվում է, որ \_\_\_\_\_ 200 թ-ի \_\_\_\_\_ « »-ին

դատապարտյալի անունը, ազգանունը,

ներկայացվելու է ազատման:

Լրացուցիչ տեղեկություններ \_\_\_\_\_ - վերաբերյալ

ծննդյան թիվը, կրթությունը, տարիքը, մասնագիտացումը,

առողջական վիճակը, աշխատունակությունը

ընտանեկան դրությունը, խնամքի տակ գտնվող անձանց թիվը

մինչև դատապարտվելը զբաղմունքի տեսակը

ազատվելուց հետո բնակության վայրը, հասցեն, հեռախոսի համարը

Խնդրում ենք \_\_\_\_\_ -ին հաշվառել, աջակցել նրա աշխատանքի

տեղավորմանը և արդյունքների մասին տեղեկացնել:

ՀՀ ԱՆ « \_\_\_\_\_ » քրեակատարողական հիմնարկի պետ

(ստորագրություն)

Թիվ \_\_\_\_\_

« » \_\_\_\_\_ 200 թ.

Ձև 15

ՀՀ ոստիկանության

տարածքային բաժնի պետ

### Հ Ա Ր Ց ՈՒ Մ

ՀՀ ԱՆ « \_\_\_\_\_ » քրեակատարողական հիմնարկից  
Հիմնարկի անվանումը

200 թ-ի \_\_\_\_\_ « »-ին հնարավոր է ազատվի \_\_\_\_\_

անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան թիվը,

մինչև դատապարտվելը բնակության վայրը, աշխատանքի վայրը, պաշտոնը

դատապարտված \_\_\_\_\_ ,  
հոդվածը, պատժաչափը

որը ցանկություն է հայտնել բնակվել \_\_\_\_\_

:

Խնդրում ենք ճշտել \_\_\_\_\_ -ի  
դատապարտչալի անունը, ազգանունը



--	--	--	--	--	--	--	--	--

2617

«Հաստատում եմ»  
«            » ՔԿՀ-ի պետ

**ՎԱՐՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԹԵՐԹԻԿ**

Ղատապարտյալ \_\_\_\_\_  
անուն, ազգանուն, հայրանուն

Բացված է \_\_\_\_\_ թ-ին, \_\_\_\_\_ ՔԿՀ-ում, կատ` \_\_\_\_\_

Շարունակվել է \_\_\_\_\_ թ-ին, \_\_\_\_\_ ՔԿՀ-ում, կատ` \_\_\_\_\_

Շարունակվել է \_\_\_\_\_ թ-ին, \_\_\_\_\_ ՔԿՀ-ում, կատ` \_\_\_\_\_

Շարունակվել է \_\_\_\_\_ թ-ին, \_\_\_\_\_ ՔԿՀ-ում, կատ` \_\_\_\_\_

անուն, ազգանուն, ստորագրություն

Հ/հ	Գնահատման չափանիշը	Համառոտ նշումներ ըստ եռամսյակների	Գնահատման արդյունքները
1.	ղատապարտյալի կապն ընտանիքի և արտաքին աշխարհի հետ	I	
		II	
		III	
		IV	
2.	մասնակցությունը կրթական, մշակութային և այլ ծրագրերին և ներգրավվածությունը աշխատանքին	I	
		II	
		III	
		IV	
3.	կարգապահությունը	I	
		II	
		III	
		IV	
4.	ղատապարտյալի ռիսկայնության աստիճանը	I	
		II	
		III	
		IV	
5.	ուղղման գործընթացի ծրագրի կատարման արդյունքները	I	
		II	
		III	
		IV	

**Դատապարտյալի ուղղման աստիճանը**

«Համաձայն եմ»

\_\_\_\_\_ (պաշտոն)

\_\_\_\_\_ (ստորագրություն)

\_\_\_\_\_ (ազգանուն)

«Փակեց»

\_\_\_\_\_ (պաշտոն)

\_\_\_\_\_ (ստորագրություն)

\_\_\_\_\_ (ազգանուն)

որ ամիս տարեթիվ

26 18

«Հաստատում եմ»  
ՀՀ ԱՆ « \_\_\_\_\_ » ՔԿՀ պետ

« \_\_\_\_\_ » 200 թ.

**Բ Ն ՈՒ Թ Ա Գ Ի Ր**

Դատապարտյալ \_\_\_\_\_

անուն, հայրանուն, ազգանուն,

ծննդյան թիվը, վայրը, ազգությունը, քաղաքացիությունը, բնակության վայրը,

ընտանեկան վիճակը, խնամքի տակ գտնվող անձինք

կրթությունը, մասնագիտությունը, մասնագիտական հմտությունները, աշխատանքը մինչև կալանավորվելը

առողջական վիճակը

նախկին դատավաճությունը

նախկինում պատժից պայմանական վաղաժամկետ ազատված, պատիժն ավելի

մեղմ պատժատեսակով փոխարինված լինելու, ներման, համաներման հանգամանքը

ներկա գործով դատապարտվել է (դատարանը, քր. օր-ի հոդվածը, պատժաչափը)

պատժի սկիզբը և վերջը

տեղեկություններ դատավճռի բողոքարկման մասին

1. Հիմնարկում գտնվելու ժամկետը \_\_\_\_\_

**2. Կարգապահությունը պատժի կրման ընթացքում**

\_\_\_\_\_

տույժերի, խրախուսանքների առկայությունը

**3. Ինքնագործ միավորումների աշխատանքին, կրթական, աշխատանքային, մշակութային և այլ բնույթի ծրագրերին և հանրօգուտ միջոցառումներին մասնակցությունը \_\_\_\_\_**

\_\_\_\_\_

եջել, որ միջոցառումներին է մասնակցել և ինչ տևողությամբ

**4. Դատապարտյալի կողմից տուժողին պատճառած վնասի հատուցումը \_\_\_\_\_**

**5. Արտաքին աշխարհի՝ ընտանիքի, համայնքի հետ կապը և փոխհարաբերությունները**

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

**6. Դատապարտյալի վարքը, բնավորությունը, խառնվածքը, հոգեբանական առանձնահատկությունները և դրանց դինամիկան \_\_\_\_\_**

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

**7. Վերաբերմունքը կատարած հանցագործության և դատավճռի վերաբերյալ**

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

**8. Պատժի կրումից ազատվելուց հետո բնակարանային, աշխատանքային, նյութակենցաղային ապահովվածությունը և հետագա ծրագրերը \_\_\_\_\_**

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

**9. Ընթացիկ գնահատումների արդյունքները և ռիսկայնությունը**

\_\_\_\_\_

**10. Այլ տեղեկություններ**

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

**Եզրակացություն դատապարտյալի ուղղման վերաբերյալ**

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

«Համաձայն եմ» ՍՀԲԱ համակարգող պետի տեղակալ

«Համաձայն եմ» ԱԱ համակարգող պետի տեղակալ

(ստորագրություն)

(անուն, ազգանուն)

(ստորագրություն)

(անուն, ազգանուն)

«Կազմեց»

(ստորագրություն)

(անուն, ազգանուն)

ՍՀԲԱ բաժնի մասնագետ

